Չորեքշաբթի
11 հունվարի 2023թ.
№ 1 (589)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
9 771829 346006 23001 >

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Արցախի ապագան նորից դարձել է հայի արժանապատվության հերթական քննությունը. որ-պեսզի այդ քննությունը ստանա պատվաբեր գնահատական, պետք է ազգովի սթափվենք ու զգաստանանք:

Արցախի թեմի առաջնորդ
Տեր Վրթանես Եպիսկոպոս
Աբրահամյան

Սյունեցիների մտածումներն ու հայացքները Ձեզ են ուղղված, սիրելի արցախցիներ

Դուք դժվարությունների առջև երբեք չեք ընկրկել ու չեք նահանջել, այսօր էլ շարունակում եք արժանապատվորեն ու հերոսաբար պայքարել հանուն Ձեր ազատ ու անկախ կյանքի, հանուն պատմական արդարության վերականգման: Ձեր քաջ նախնյաց օրինակով հաստատուն մնացեք հայրենի հողում ապրելու վճռականության մեջ: Մեզ հետ է Աստված, մեզ հետ է Դավիթ Բեկի, Զորավար Անդրանիկի և Գարեգին Նժդեհի ոգին: "

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ. «... Ու եթե, Աստված չանի, զոհվելու ենք, ապա՝ մեր հողի վրա. սա է արցախցու որոշումը»

Ամանորի և Սուրբ Ծննդի նախօրեին բոլորիս հայացքը, հատկապես Սյունիքում, ուղղված է շրջափակման մեջ հայտնված հայոց Արցախին:

Դեկտեմբերի 25-ի ստեփանակերտյան հանրահավաքը ցույց տվեց վերստին, որ ոչ թե Հայաստանի Հանրապետությունն ու Սփյուռքն են ապրեցնում Արցախին, այլ Արցախն է բախտորոշ մեր օրերում ոգեշնչում հայ մարդուն:

Հանրահավաքը, անտարակույս, պատասխան տվեց մտահոգող բազմաթիվ հարցերի:

Եվ, այդուհանդերձ, շարունակում ենք իրավիճակի շուրջ զրույցը պաշարված Արցախի երևելի մտավորականների հետ, ինչի համար դեկտեմբերի 26-ին հեռավար հարցազրույց ունեցանք բանաստեղծ, դրամատուրգ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, Արցախի Հանրապետության պետական օրհներգի հեղինակ Վարդան Հակոբյանի հետ:

– Պարոն Հակոբյան, պաշարված Արցախի ներկայացուցիչների հետ վերջին անգամ հեռավար զրույց ենք ունեցել 1991, 1992 թվականներին՝ մինչև Լաչինի միջանցքի ազատագրումը: Ու մտքովս չէր անցնում, անգամ 2020 թ. նոյեմբերի 9-ի կապիտուլյացիայից հետո, որ Արցախը կրկին կհայտնվի շրջափակման մեջ, ու մենք այսկերպ կզրուցենք: Ինչո՞ւ այսպես ստացվեց:

– Խնդիրը բավականին բարդ է, շրջափակումը, որ ստեղծվել է Արցախի շուրջ, պատերազմական վիճակ է և գուցե մի քիչ ավելի սարսափելի:

Կարծում եմ՝ մեր ժողովուրդն այս իրավիճակից դուրս գալու երկու-երեք ճանապարհ ունի. դրանցից մեկը լռելն է և կամաց-կամաց հեռանալը՝ Նախիջևանի նման: Մյուսը, որ մենք ընտրել ենք, պայքարի ճանապարհն է: Այո, պայքարը պետք է շարունակենք... Բայց գիտե՞ք, ամբոխավարական, պոպուլիստական խոսքերը շատացել են, սուտն է շատացել, և հիմա մի բան է հարկավոր՝ պիտի (ուզենք-չուզենք) զինվենք՝ հանուն խաղաղության, եթե չզինվենք, ավելի ուժեղ չլինենք, գերժամանակակից զենքեր ձեռք չբերենք՝ խաղաղություն չենք տեսնելու և ոչնչանալու ենք: Զինվելը, անշուշտ, կախված է նաև միջոցներ ունենալուց: Կարծում եմ՝ մեր ժողովուրդը՝ Հայաստան, Արցախ, Սփյուռք, պետք է սոված մնա, տկլոր մնա (եթե պետք է), բայց զենք ձեռք բերի: Եթե ուզում ենք ապրել, իսկ եթե չենք ուզում՝ դա արդեն ուրիշ խնդիր է: Բայց եթե-ի խնդիր չկա, մենք որոշել ենք ապրել Արցախում, մնալ Արցախում՝ մեր պապական հողի վրա, որովհետև ուրիշ տեղ չունենք: Արցախն էլ առանց արցախցիների երբեք չի կարող Արցախ լինել: Այնպես որ՝ պիտի ունենանք Ադրբեջանից էլ հզոր ինքնապաշտպանություն, որ կարողանանք հասնել խաղաղության. սա է միակ ճանապարհը:

– Եթե վերաբացվի միջանցքը, ապա, դատելով դեպքերի զարգացման տրամաբանությունից, դա կարող է երբևէ կրկնվել...

Ի՞նչ անել, որպեսզի Արցախի ու Մայր հայրենիքի միջև ճանապարհային հաղորդակցությունն այլևս ու երբեք չխափանվի:

– Այսօր չպետք է հույս դնել ուրիշների

վրա: Շատ հաճախ հույս ենք կապել Ռուսաստանի հետ՝ որպես մեր դաշնակցի, մեր բարեկամ երկրի, բայց Ռուսաստանի համար առաջինն իր շահն է: Մինչդեռ մենք մոռանում ենք մեր ժողովրդի շահը: Ոչ մի ժողովուրդ մեր փոխարեն ոչ կռվելու է, ոչ էլ մեր շահը պաշտպանելու, լինի Արևմուտքը, լինի Արևելքը, ռուսը...

Գիտե՞ք, գործերի տրամաբանությունն այլ բան է հուշում. ռուս ժողովուրդը միշտ եղել է մեզ հետ, մենք եղել ենք նրա հետ, բայց ռուսական իշխանությունները հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ոչ միշտ են գործել մեր օգտին: 1915 թվականին այդպես է եղել, 1920 թվականին էլ Նախիջևանը և Արցախն են

Շարունակությունը՝ էջ 5

ՀՊՄԿ-ն՝ Հայաստանի տնտեսության լոկոմոտիվ

Հայաստանի տնտեսությունն անցած 2022 թվականին լուրջ առաջընթաց է գրանցել, սակայն վերլուծաբանները մի շարք գործոններ են մատնանշում՝ հորդորելով խուսափել էյֆորիայից:

Տարեկան տվյալները վիճակագրական ազգային կոմիտեն դեռ չի հրապարակել, ըստ ամենայնի, դրանք հայտնի կդառնան միայն հունվարի վերջին, փետրվարի սկզբին: Պաշտոնական տվյալներով՝ նոյեմբեր ամսվա տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմում է 13,8 տոկոս, իսկ ամբողջ տարվա համար՝ հունվարից նոյեմբեր ժամանակահատվածի համար՝ 14,4 տոկոս:

Իշխանությունները նշում են տարեկան կտրվածքով երկնիշ աճի հնարավորության մասին, բայց անկախ վերլուծաբաններն ու միջազգային ֆինանսական ինստիտուտներն ավելի համեստ կանխատեսում են անում՝ մինչև 7-8 տոկոսի սահմաններում: Նույնիսկ գործող վարչախմբի «սրտի» էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն է արձանագրել, որ Հայաստանի տնտեսության համար ռիսկեր կան, երեք հիմնականներն են՝ աշխարհաքաղաքական իրավիճակով պայմանավորված անվտանգությունը, դանդաղկոտ բյուրոկրատիան և կադրերի պակասը:

Ֆինանսների նախկին նախարար Վարդան Արամյանն էլ ընդգծել էր, թե 2022թ. Հայաստանի գրանցած աննախադեպ տնտեսական աճը պայմանավորված է «պահային գործոնով»՝ աշխարհաքաղաքական ու համաշխարհային տնտեսության մեջ ստեղծված իրավիճակով ու որպես հետևանք՝ Ռուսաստանի Դաշնության մեծ թվով քաղաքացիների ու կապիտալի ներհոսքով:

ՀՀ ՊԵԿ-ը նախատեսում է եզրափակել պետական բյուջեի հարկային եկամուտների և տուրքերի գերակատարմամբ: Կոմիտեն տարին ամփոփում է 1 տրիլիոն 925 միլիարդ դրամ հարկային եկամուտներով, որը գերազանցում է նախորդ տարվա հարկային եկամուտները և տուրքերը՝ 338 միլիարդով կամ 21,4 %-ով, իսկ տարեսկզբին հաստատված ցուցանիշը՝ 81 միլիարդ դրամով: Ընդ որում՝ վստահաբար կարելի է պնդել, որ հարկային մուտքերը հիմնականում խոշոր ընկերությունների վճարումների շնորհիվ են, ինչի արդյունքում էլ գործող իշխանություններն իրենց հաջողությունների մասին ազդարարելու հնարավորություն են ստացել:

Առայժմ չկան խոշոր հարկատուների տարեկան տվյալները. առաջին երեք եռամսյակների տվյալներով՝ հազար խոշոր հարկատուները 9 ամսում վճարել են 1 տրիլիոն 82 միլիարդ դրամ, իսկ տարեկան կտրվածքով այդ թիվն ավելի մեծ կլինի: Այսինքն՝ խոշոր հարկատուներն ավեի շատ հարկեր են վճարել, քան մյուս բոլորը միասին:

Հունվար-սեպտեմբերի տվյալներով՝ առաջին հնգյակում գտնվող ընկերություններից

Շարունակությունը՝ էջ 5

Դավիթ Դանիելյանը պատասխանում է «Սյունյաց Երկրի» հարցերին

Թե ինչով նշանավորվեց 2022 թվականը՝ քննարկումների թեմա է այս օրերին: Այդ թեմայի վերաբերյալ մեզ հետաքրքրող հարցերի շուրջ զրույցի հրավիրեցինք հանրապետության իշխող քաղաքական ուժից Ազգային ժողովի պատգամավոր, մեր հայրենակից Դավիթ Դանիելյանին:

– Պարոն Դանիելյան, դժվարին օրեր ենք ապրում ազգովի՝ պայմանավորված հատկապես Լաչինի միջանցքում տեղի ունեցող իրադարձություններով: Ընդ որում՝ եթե անգամ միջանցքն այսօր բացվի, միևնույն է՝ այն մնալու է մեր ազգային ցավերից մեկը:

Սակայն լրջագույն այդ խնդրի վերաբերյալ Երևանից ոչ միանշանակ ու հակասական արձագանքներ ենք լսում և լսում ենք միայն խոսքեր...

Հետաքրքիր է՝ այունեցի պատգամավորներդ, որ աննախադեպ մեծ խումբ եք Ազգային ժողովում, հավաքվե՞լ եք ճգնաժամային այդ առիթով և ունե՞ք սեփական կարծիք կամ դիրքորոշում Լաչինի միջանցքում ստեղծված վիճակն ու ճգնաժամը հաղթահարելու ուղիների վերաբերյալ:

– Ինչ խոսք, դժվարին և ծանրագույն շրջան է բոլորիս համար: Միանշանակ է, որ այս հարցը ևս Ադրբեջանն օգտագործելու է Հայաստանին զիջումներ պարտադրելու, մեր երկրում ներքաղաքական ճգնաժամ և լարվածություն առաջացնելու նպատակով: Այս իրավիճակում դժվար է պահպանել սառնասրտություն, հետևաբար հնչում են ոչ միանշանակ ու իրարամերժ հայտարարություններ: Ցավալիորեն, մենք չենք կարողանում միասնական դիրքորոշում ձևավորել հարցի լուծման ուղիների վերաբերյալ:

Սյունիքի պատգամավորների հետ չենք ձևավորել միասնական դիրքորոշում, սակայն կնշեմ, որ բոլոր պատգամավորներն իրականացնում են աշխատանք միջազգային գործընկերների և իրավապաշտպան կառույցների հետ, օգտագործում խորհրդարանական դիվանագիտության բոլոր լծակները հարցը կարգավորելու համար:

– Ըստ Ձեր ունեցած տեղեկությունների՝ Արցախի բնակիչներից քանի՞ հոգի է մնացել Գորիսում, ի՞նչ պայմաններում են նրանք գտնվում, և ովքե՞ր են զբաղվում մեր հայրենակիցների ընթացիկ խնդիրներով:

– Գորիսում է մեր 300 հայրենակից: Իմ տեղեկություններով՝ նրանք գտնվում են նորմալ պայմաններում, հատկապես արցախցի երեխաներն ուշադրության կենտրոնում են, մասնավոր կազմակերպությունները և բազմաթիվ անհատներ նույնպես պարբերաբար հրավիրում են նրանց տարբեր միջոցառումների, ուղարկում նվերներ, փորձում ինչ-որ կերպ ուրախացնել տնից հեռու գտնվող մեր երեխաներին: Պարբերաբար ծանոթանում եմ իրավիճակին, ինձ հավաստիացրել են՝ ամեն ինչով ապահովված են մեր հայրենակիցները, և այս պահին ոչնչի կարիք չունեն:

– Գիտե՞ք, երբեմն տարակույսներ ունեք տեղիք տվող հայտարարություններ ենք լսում մայրաքաղաքից, նաև Ազգային ժողովից: Ի՞նչ ասել է՝ հո չե՞նք գնալու կռվենք Լաչինի միջանցքի համար:

Այնքան նման է Սև լճի արևելյան հատվածը թուրքերի կողմից բռնազավթելու օրերին արված հայտարարությանը՝ հո չե՞նք գնալու այդ սարերի համար կռվենք: Գոնե այունեցի պատգամավորներն ու իշխանավորները զերծ մնան մեր վերքին աղ ցանող նման հայտարարություններից:

– Ես կարող եմ ասել իմ դիրքորոշումը, որ ներկայացրել եմ թե գործընկերներիս, թե մեր հայրենակիցներին՝ Սյունիք կատարած այցերիս ընթացքում: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, միջազգային իրավունքի հիման վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո են: Հետևաբար՝ մեր պետությունը հնարավոր բոլոր միջոցներով պետք է պաշտպանի մեր հայրենակիցներին: Այս պահին պետությունն օգտագործում է դիվանագիտական գործիքակազմը, գրանցել է տեսանելի հաջողություն այն առումով, որ միջազգային գործընկերները և իրավապաշտպան կազմակերպություններն արձանագրել են Ադրբեջանի ոչ իրավաչափ գործելաոճը, դատապարտել են այն և կոչ արել անհապաղ բացել Արցախը Հայաստանին կապող կյանքի ճանապարհը: Ես ընգծում եմ՝ մեր պետությունն ամեն կերպ պետք է պաշտպանի իր քաղաքացիների հիմնարար իրավունքները:

– 2022-ը ծանր տարի էր Սյունիքի համար. դեռևս մարտ ամսին թուրքերը զավթեցին Ներքին Հանդի մերձակա իշխող բարձունքները:

Սեպտեմբերյան եռօրյա պատերազմում թշնամին այդ ուղղությամբ ավելի առաջ եկավ, որի հետևանքով գյուղում բնակվելն առայսօր մեծ ռիսկեր է պարունակում: Կորցրինք նաև Մեծ Իշխանասարի մերձակայքի իշխող բարձունքները՝ ստույգ սպառնալիքներ ստեղծելով Սյունիքն ու Արցախը մայրաքաղաքին կապող Մ2 մայրուղու համար:

Եվ այդ ամենից հետո՝ մինչև այսօր, հանրապետության համապատասխան պաշտոնյաները չեն ասում, թե Ներքին Հանդում կամ Մեծ Իշխանասարում որտեղո՞վ է անցնում հայ-ադրբեջանական շփման գիծը՝ ավելորդ միջադեպերից խուսափելու համար: Միգուցե Ձեր օգնությա՞մբ ցրենք անորոշության այդ մշուշը:

– Հայաստանի Հանրապետությունն ունի միջազգայնորեն ճանաչված տարածք և սահմաններ: Իսկ Ձեր կողմից նշված իրադարձություններն Ադրբեջանի կողմից միջազգային իրավունքի ոտնահարում են: Ռազմական ագրեսիայի միջոցով Ադրբեջանն օկուպացրել է ՀՀ տարածքները և արժանացել միջազգային հանրության կոշտ արձագանքին: Ադրբեջանը պետք է վերադառնա ելման դիրքեր, սա միանշանակ է: Այո, հակառակորդն իրականացնում է ամրակայման աշխատանքներ, փորձում է պահպանել օկուպացված դիրքերը, սակայն վաղ թե ուշ վերադառնալու է ելման դիրքեր:

– Հատկապես տարվա երկրորդ կեսին Սյունիք այցելեցին «միսիոներական» տարբեր խմբեր՝ հակառուսական քարոզչության նպատակով: Սյունիքում, մինչդեռ, քչերն են համաձայն այդ քարոզիչների տեսակետներին՝ նկատի ունենալով ՌԴ զինվորականության՝ այլընտրանք չունեցող ներկայությունը մեր մարզի սահմաններում:

Շարունակությունը՝ էջ 5

Մեղրեցի ճանապարհաշինարարների համար խոչընդոտ չէ անգամ Դիբագի լեռնանցքի անսովոր ձմեռը

Ավարտված տարում Սյունիքում կատարված ճանապարհաշինական աշխատանքների շարքում յուրահատուկ տեղ ունի Մ2 մայրուղու Քաջարան-Դիբագի լեռնանցք ճանապարհահատվածի հիմնանորոգումը, որն իրականացրել է Մեղրու ճանապարհաշինարարների փորձառու ջոկատը՝ Հայաստանի վաստակավոր շինարար Ազատ Գասպարյանի գլխավորությամբ:

Կատարված հսկայածավալ աշխատանքներին ծանոթանալը չէր միայն լեռնանցք կատարած մեր այցելության նպատակը: Բանն այն է, որ մայրուղին անցնում է 2535 մ բարձրությամբ Մեղրու լեռնանցքով՝ դրանից բխող բոլոր հետևանքներով: Լեռնանցքին բնորոշ առատ ձյունը, սաստիկ բուքը յուրօրինակ դժվարություններ են ստեղծում հանրապետության համար ռազմավարական բացառիկ նշանակություն ունեցող այդ ճանապարհի անվտանգ շահագործումն ապահովելու գործում: Եվ տարիներ շարունակ մեղրեցի ճանապարհաշինարարները հաջողել են ամենածանր եղանակային իրավիճակում անգամ ապահովել պատշաճ պայմաններ՝ անվտանգ երթևեկության համար:

Այս օրերին, բնականաբար, հետաքրքիր էր իմանալ նաև՝ իսկ ինչպե՞ս են Մեղրու ճանապարհաշինարարները պատրաստվել ձմռանը: Մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը ստանալու համար էլ զրուցեցինք «Մեղրիի ՃՇՇՁ» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանի հետ: Բայց, նկատի ունենալով ճանաչված ճանապարհաշինարարի փորձն ու իմացությունը, նրա հետ քննարկեցինք Սյունիքի մարզի ճանապարհների շինարարությանն ու շահագործմանն առնչվող մի քանի հարց ևս:

– Պարոն Գասպարյան, ձմեռն իր իրավունքների մեջ է. տարածքում, որ Ձեր ընկերությունն է սպասարկում, ձյուն է նստել: Ինչպե՞ս է ընթանում ճանապարհների ձմեռային պահպանությունը:

– Ձմեռային սպասարկմանը՝ մանավանդ այս նոր ճանապարհի կառուցումից հետո (Տաթև-Լծեն ճանապարհահատվածի մասին է խոսքը, խմբ.), շատ լուրջ պիտի վերաբերվել, այն պարզ պատճառով, որ դեպի մայրաքաղաք երթևեկության ինտենսիվությունն ու բեռնաշրջանառությունն է ավելացել, հատկապես ծանրաքաշ մեքենաների քանակն է ավելացել, որոնց պատճառով նաև խցանումներ են լինում՝ երբեմն կաթվածահար անելով երթևեկությունը: Մանավանդ՝ եթե ճանապարհը թե ձմեռային, թե ամառային չափանիշներով չի բավարարում անխափան երթևեկության պահանջները:

Մենք ուզում ենք, որ ձմռանը ճանապարհը լինի իդեալական՝ առանց չափազանցության: Իսկ որպեսզի այդպես լինի, դեռ ամառվանից ճանապարհի խնդրահարույց հատվածներում փոքրիկ կույտերով ավազ ենք լցրել, որ առաջին ձյունն ու ճանապարհի սառցակալումը վարորդին և ճանապարհաշինարարին հանկարծակիի չբերեն, որ վարորդներն իրենց «շտապօգնությունը» կազմակերպեն: Իսկ նոյեմբերի 15-ից անցել ենք կանոնավոր հերթապահության Մեղրիի լեռնանցքում: Փառք Աստծո, ճանապարհաշինարարների մեր թիմը մնացել է նույնը, բոլորն իրենց պարտականությունները հստակ գիտեն: Հարգանք ու պատիվ կոլեկտիվի յուրաքանչյուր անդամին: Աղի ու ավազի զգալի պաշար ունենք, որոնք հույս են ներշնչում՝ ճանապարհների ձմեռային սպասարկման գործում խնդիրներ չեն ծագի: Տեխնիկան սարքին է, մեխանիկական բաժինը լուրջ աշխատանք է կատարել, մեքենայական հավաքակազմը համալրված է, անհրաժեշտության դեպքում կարող ենք օգտակար լինել այլ ճանշին ընկերությունների՝ ձնաբքի հետևանքներն արագ վերացնելու համար: Անցած տարի մարտ ամսին, օրինակ, օգնության՝ գնացինք Կապան-

Տաթև հատվածում...

– Վերջին շրջանում խոսակցություններ կան Հյուսիս-հարավ ճանապարհի Մեղրի-Քաջարան հատվածի հետ կապված, երբեմն նաև իրար հակասող: Ի՞նչ վիճակում են այդ ճանապարհի սյունիքյան հատվածի կառուցմանն առնչվող նախապատրաստական աշխատանքները:

– Հյուսիս-հարավ ճանապարհը միանշանակ կառուցվելու է, և շուտով բացվելու է մրցութային փաթեթը չորրորդ տրանշի վերաբերյալ, որն ընդգրկում է Մեղրիի մաքսակետից մինչև Լիճքի թունելի հատվածը: Դա ծրագիր է, որի մրցութային փաթեթը գնահատելու, հաղթողին ճանաչելու համար ժամանակ է պահանջվելու... Մեզ նույնպես դիմել են արտասահմանյան ընկերությունները, թե ինչով կարող ենք մասնակցել սպասվող շինարարությանը: Չորս-հինգ կազմակերպություն եկել է մեր ընկերություն, մեզնից վերցրել անհրաժեշտ նյութեր... Ուրախալի է, որ մայրուղու կառուցմանը ենթադրվում է նաև մեր ընկերության մասնակցությունը:

– Այսինքն՝ հնարավոր է, որ Ձեր ընկերությունը լինի ենթակապալառո՞ւ...

– Այո, տարբերակներից մեկը դա է, կամ միգուցե լինենք մատակարար:

– Իսկ Ձեր ընկերությունը հայտարարված մրցույթին չի՞ մասնակցում:

– Առաջադրված չափորոշիչները դժվար է բավարարել, հինգ միլիարդ դրամի հիմնական միջոց է պահանջվում, ինչպե՞ս բավարարենք:

– Դուք ծանո՞թ եք Հյուսիս-հարավի նշված հատվածի նախագծին:

– Թեթևակի ծանոթ եմ, ճանապարհը կանցնի ներկայումս գործող ճանապարհով՝ Արաքսի ափով, Մեղրու սահմանապահ ջոկատի երկրորդ ուղեկալի կողքով՝ դեպի սար, այնուհետև՝ Մեղրիի փոքր թաղի եկեղեցու արևմտյան հատվածով՝ էստակադաների միջոցով կհասնի Լեհվազ, մինչև Լիճքի թունելի մոտ: Դա չորրորդ տրանշն է:

– Իսկ Լիճքից Քաջարան հատվածի մասին ի՞նչ կասեք:

– Այդ հատվածի վերաբերյալ տեղեկատվության չեմ տիրապետում:

– Անդրադառնանք Սյունիքի ճանապարհաշինությանը: Մարզում տասից ավելի ուղղությամբ ճանապարհաշինություն է իրականացվում: Կարելի է ասել՝ հիմնականում դրսի ճանապարհաշինական ընկերություններն են իրականացնում: Ինչո՞վ է դա բացատրվում: Մարզում այդքան ներուժ չունե՞նք, թե՞ աշխատանքի ծավալներն այնքան մեծ են, որ տեղի ընկերությունների հնարավորությունները չեն բավականացնում:

– Պիտի ասեմ՝ մեծածավալ շինարարություն է արվել և արվում Սյունիքում, պարզապես մարզի ռեսուրսները չէին բավարարելու ճանապարհաշինական այդքան գործեր կա-

Շարունակությունը՝ էջ 6

Հրամանատարը, ով իր քաջարի զինակիցների հետ 3000 և ավելի մետր բարձրության լեռնագագաթներից հսկում է հայոց սրբազան սահմանները

Հայոց ազգային բանակում քիչ չեն երիտասարդ, բայց արդեն մարտական ծանրակշիռ ճանապարհ անցած (2016 թ. ապրիլյան, 2020թ. 44-օրյա, 2022 թ. սեպտեմբերի 13-14-ի պատերազմներ) սպայական բարձր կոչումներ ունեցող զինվորականները: Նրանցից մեկը փոխգնդապետ Արամ Գևորգյանն է:

Փոխգնդապետ Արամ Գևորգյանը որդեգրել է մի սկզբունք. զինվորից ոչ մի մետր չկտրվել, զինվորի կյանքով ապրել. *«20 տարուց ավելի ծառայում եմ, իմ ապրած օրն առանց զինվորի չեմ պատկերացնում: Մարտական գործողությունների ժամանակ զինվորը տեսել է ինձ իր կողքին, դրանից ավելի է գոտեպնդվել: Երբեմն ասել են՝ հրամանատար, քո տեղն այստեղ չէ, կարծում ես՝ չե՞նք կռվելու: Ես էլ ասել եմ, որ իրենց հետ ավելի ապահով եմ զգում, քան իրենցից մի քանի կիլոմետր հեռու: Իմ համոզմամբ՝ զինվորի առօրյայով, հոգսերով ապրող հրամանատարը չի կարող հեղինակություն չվայելել, հարգված չլինել: Երկու արու զավակ ունեմ, կերազեմ, որ զինծառայության զորակոչվելով՝ նրանք ինձ պես հրամանատար ունենան: Պարտաճանաչ զինվոր կա, դժվար դաստիարակվող, ինքնասածի, կարգազանց զինվոր էլ, պիտի բոլորին հասկանաս, օրինակելի ծառայության դաշտ բերես: Սա է հրամանատարի ամենակարևոր առաքելությունը»:*

Փոխգնդապետը ներկայացնում է վերջին շրջանում իրենց կատարած գործերը՝ մարտական դիրքեր են տեղադրել, գետնատնակներ կահավորել, զինվորների և սպաների համար նպաստավոր պայմաններ ստեղծել: Այս համատեքստում երախտագիտություն է հայտնում Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրենությանը (գլխավոր տնօրեն՝ Ռոման Խուդոլիյ) և «Աժդանակ» ՍՊ ընկերությանը (տնօրեն՝ Գարիկ Ղազարյան):

Փոխգնդապետի հրամանատարությամբ զորամասը 44-օրյա պատերազմում տասը զոհ է տվել, 27 ծանր ու թեթև վիրավորներ: Այժմ զորամասի տարածքում խաչքար են կանգնեցնում նահատակված մարտական ընկերների հիշատակը հավերժացնելու համար…

Նրա հրամանատարությամբ զորամասի անձնակազմը մարտական հերթապահություն է իրականացնում Սյունիքի արևմտյան սահմանում: Դիրքեր կան, որոնք ծովի մակարդակից 3000-3500 մետր բարձրության վրա են, որտեղ ձմռանը ձյան շերտի հաստությունն անցնում է երկու-երեք մետրից…

Ի դեպ, զորամասի տարածքում հանդիպեցինք զինվորի ծնողի: Որդու ծննդյան տարեդարձի առիթով ժամանել էր Գյումրիից: Կարճ զրույց ունեցանք նրա հետ: Տպավորված էր թե զորամասի հրամանատարության վերաբերմունքից, թե որդու զինծառայության պայմաններից և ընդհանրապես զորամասում տիրող կարգապահությունից:

Երբ հրամանատարի հետ զրուցում էինք, նրա աշխատասենյակ ելումուտ էին անում նրա տեղակալները, զինակից ընկերները:

Ականջալուր եղանք հրամանատարի մասին ասված կարծիքներին:

ՄԱՅՈՐ ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ (ԶՈՐԱՄԱՍԻ ՇՏԱԲԻ ՊԵՏ)

Մեծ կամքի և ուժի տեր անձնավորություն է Գևորգյանը՝ օժտված հրամանատարական ընդգծված ունակություններով: Միշտ պատրաստ է իր առջև դրված մարտական առաջադրանքները կատարել, ինչն արտահայտվեց նաև ռազմական գործողությունների ժամանակ: Նրա հրամանատարությամբ զորամասում տիրող կարգ ու կանոնը պատշաճ մակարդակի վրա է. ռազմական գործողությունների ժամանակ ոչ մի զինվոր չի հրաժարվել իր առջև դրված առաջադրանքները կատարելուց: Իսկ առօրյայում փոխգնդապետ Գևորգյանն ընտանեկան օջախը պաշտող մարդ է, ընկերասեր անձնավորություն և իրավամբ հարգանք է վայելում թե իր ենթակաների, թե ընդհանրապես շրջապատի մարդկանց կողմից:

ՄԱՅՈՐ ՏԻԳՐԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ (ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ)

Մոսկվայի բարձրագույն հրամանատարական ինստիտուտն ավարտելուց հետո

Այցեքարտի փոխարեն. Արամ Գևորգյանը ծնվել է 1985 թ. Կապանում, ավարտել է թիվ 27 գիշերօթիկ դպրոցը, այնուհետև զինվորական կրթություն ստացել Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: Ավարտելուց հետո ծառայությունն անց է կացրել մի շարք զորամասերում: Փոխգնդապետի կոչման համար Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում մասնակցել է դասընթացների: Ներկայումս N զորամասի հրամանատարն է: Ամուսնացած է, ունի երկու որդի:

նշանակվել եմ Կարմրաքարի զորամասի հետախուզական դասակի հրամանատար: Վաշտի հրամանատարը փոխգնդապետ Արմեն Գևորգյանն էր, միասին ծառայել ենք մինչև 2019 թվականը: Դրանից հետո տեղափոխվել եմ հատուկ նշանակության բրիգադ՝ «սպեցնազ», այնուհետև ծառայությունս շարունակել այս զորամասում: Արմեն Գևորգյանը, որպես զինվորական, ունի առաջնորդի հատկանիշներ, միշտ ուսուցանել է կրտսեր ծառայակիցներին, թե ծառայողական, թե մեր ընտանիքների վերաբերյալ հարցերում օժանդակել մեզ: Առօրյա կյանքում եղել է անշահախնդիր, միշտ պահել հավասարությունը: Սոցիալապես անապահով ընտանիքներից զորակոչված զինվորներն իր տեսադաշտում են եղել: Մշտապես՝ ամենածանր պահին, ձեռք է մեկնել ծառայակցին: Սեպտեմբերի 13-14-ին սանձազերծված պատերազմի ժամանակ զբաղեցրել էինք մեր պաշտպանական շրջանները, հրամանատար Ա. Գևորգյանը, նկատելով, որ մեր զբաղեցրած հենակետերի առջև մարտական գործողություններ չկան, նախաձեռնություն է դրսևորել և դիմել վերադաս հրամանատարությանը՝ հնարավորության սահմաններում մեզ այնպիսի տարածք ուղարկել, որտեղ իրադրությունն ավելի լարված է: Թող ինքնագովություն չլինի, մեր զորամասում, որի հրամանատարը փոխգնդապետ Արմեն Գևորգյանն է, մարտական ոգին միշտ բարձր է: Իսկ դա արդյունք է նաև այն բանի, որ մարտական պատրաստության պարապմունքները բարձր մակարդակով են անցկացվում:

ՄԱՅՈՐ ԱՍԼԱՆՅԱՆ (ԶՈՐԱՄԱՍԻ ԹԻԿՈՒՆՔԻ ՊԵՏ)

Մեր հրամանատարը զուսպ, աչալուրջ անձնավորություն է: Յուրաքանչյուր սպայի, զինվորի, պայմանագրայինի հոգեբանությանը խորամուխ, նրանց կարիքներին իրազեկ: Քաջատեղյակ է ամեն ինչից, լինի անձնական հարց, թե ծառայողական: Եթե մեկը նրան դիմում է որևէ հարցով, բացառված է, որ ասի՝ իրավասու չեմ այդ խնդիրը լուծել կամ իմ գործառույթների մեջ չի մտնում: Անում է ամեն ինչ, որ զինվորի ծառայությունը լիարժեք լինի: Զորամասի զինվորները մարտական հերթապահություն են անցկացնում բարձրադիր դիրքերում, որտեղ եղանակը դաժան է լինում ձմռան ամիսներին, և այս համատեքստում կասեմ՝ զինվորն ապահովված է ամեն ինչով՝ սկսած կոշիկներից, վերջացրած տաք գուլպաներով, հագուստով և գլխարկով: Զինվորների ծնողներն էլ այցելելով զորամաս՝ համոզվել են, թե իրենց որդիներն ինչպիսի սնունդ են ստանում և ինչ համազգեստով են գնում մարտական հերթապահության:

Ն ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ, ՓՈԽԳՆԴԱՊԵՏ ՓԱՓԱԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մարտական ընկերոջս՝ փոխգնդապետ Գևորգյանին, ճանաչում եմ 2007-2008 թվականներից: Իրար հետ անցել ենք մարտական երկար ուղի: Կասեմ, որ առօրյա կյանքում հարևաններ ենք, մտերիմ-ընկերական հարաբերություններ ունենք, մոտ ենք ընտանիքներով: Ընտանիքի օրինակելի հայր ու ամուսին է: Քանի որ Նոր տարվա շեմին ենք, փոխգնդապետ Գևորգյանին մաղթում եմ քաջառողջություն, ընտանեկան ջերմություն, Աստված պահապան լինի իր բարեպաշտ ընտանիքին. շնորհավոր լինի նրա և նրա մերձավորների, նրա ենթակայությամբ ծառայող զինվորականության Ամանորն ու Սուրբ ծնունդը, նրան և նրա ենթակայությամբ ծառայող սպաների ու զինվորներին՝ խաղաղ երկինք և անփորձանք ծառայություն:

Մեր մեծերն են ասում՝ նայիր արմատին: Արամ Գևորգյանը սերում է Արցախյան առաջին պատերազմի ակտիվ մասնակից ծնողներից: Տարիներ առաջ «Սյունյաց աշխարհ» թերթում (9 մարտի 2001 թ.) «Կոչումը՝ գթության քույր» խորագրով ակնարկ եմ գրել նրա մոր, այն ժամանակ Կապանում տեղակայված զորամասի բուժքույր Մելանյա Գևորգյանի մասին, ով մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին, շատ ու շատ զինվորների, վիրավորների վերքերին սպեղանի դրել… Հոգին խաղաղվել է, երբ զինվորի մշուշված աչքերը բացվել, երբ նա իրեն լավ է զգացել:

Ամուսինը հայ-ադրբեջանական պատերազմի օրերից զենքը ձեռքին էր, 1992-ի հունիսին ծանր վիրավորվեց «Տրիցատի» կոչվող կիսակայարանում, ութ ամիս գամված է եղել անկողնուն… Խնամելով ամուսնուն՝ հարազատության զգացում ծնվեց մեջը՝ կռվող տղաների հանդեպ, և երբ Կապանում ձևավորվեց Հայոց ազգային բանակի զորամասերից մեկը, անդամագրվեց նրան որպես բուժքույր: Տողերիս հեղինակի համար հաճելի էր նորից վերընթերցել այդ հրապարակումը, որտեղ ուշագրավ փաստեր կան Արցախյան առաջին պատերազմից, բուժքույր Մելանյա Գևորգյան կին զինծառայողի մարտական առօրյայից:

… Երբ հրաժեշտ էինք տալիս հրամանատարին, ականատես եղանք զորամասի տարածքում իրականացվող շինաշխատանքներին: Փոխգնդապետ Արամ Գևորգյանը մոտեցավ շինարարներին: Երևաց՝ ինչ-որ ցուցումներ էր տալիս, ինչ-որ բաներ ճշտում: Կնշանակի, որ նրա տեսադաշտում ոչ միայն զինվորական գործերն են…

Իսկ ամենավերջում հրամանատարը խնդրեց Նոր տարվա կապակցությամբ իր մաղթանքները հաղորդել «Սյունյաց երկրի» ընթերցողներին. *«Շնորհավորում եմ հայ ժողովրդի Ամանորը մայր հայրենիքում, Արցախում և ի սփյուռս համայն աշխարհի: Թող խաղաղ բացվեն առավոտները հայ շինականի, զինվորի, մտավորականի, բոլոր-բոլորի համար: Աստված բոլորիս պահապան»:*

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ
26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Սյունիքի սահմանին մեր քաջարի զինվորականներն ու կամավորներն են՝ բազմապատկված զգոնությամբ, աչքն ու ականջները չորս արած

Ամանորի և Սուրբ Ծննդի նախօրեին «Սյունյաց Երկիրը» մեր երկրամասի հարավարևելյան սահմանի պաշտպանական հանգույցներից մեկում էր...

Ինչ տեսանք... Մարտական բարձր պատրաստություն, հայոց սահմանների անձեռնմխելիությունն ամեն գնով պաշտպանելու վճռականություն, Արցախյան պատերազմների հերոս նահատակների հիշատակին հավատարմություն, մեր արժանապատիվ նախնիների ու առասպելական Դավիթ Բեկի ու Գարեգին Նժդեհի օրինակին հետևելու պատրաստակամություն...

Եվ, իհարկե, ձմեռային տաք հագուստով, վառելիքով ապահովվածություն, սննդամատակարարմանն առնչվող ոչ մի խնդիր...

Իսկ ինչպե՞ս են պատրաստվում նշել Ամանորը մեր զինվորական զավակներն ու եղբայրները. իհարկե բազմապատկված զգոնությամբ, աչք ու ականջները չորս արած...

Յուրաքանչյուրը շատ լավ գիտակցում է՝ նաև իրենից է կախված հանրապետության անդորրը տոնական օրերին: Նոր տարվան բնորոշ մյուս արարողությունները, տոնական սուփրա-սեղանը՝ հետո: Բայց, իհարկե, առանց տոնածառի, քանզի ամիսներ առաջ՝ սեպտեմբերի 12-15-ին մարտական ընկերներ են կորցրել, և նրանցից յուրաքանչյուրի մասին հիշողությունները թարմ են ու թանկ...

Անշուշտ, մենք սրտառատ շնորհավորանքներ փոխանցեցինք բոլոր նրանց, ում հետ հանդիպելու և զրուցելու պատիվ ունեցանք: Բայց, որ կարևոր է, նրանք էլ խնդրեցին իրենց շնորհավորական խոսքերը փոխանցել հարազատներին ու մերձավորներին, հայրենակիցներին, Սյունիքի բնակչությանը:

Ահավասիկ նրանցից մեկի՝ մայոր Վ. Շ.-ի ուղերձը, որ, կարծեք, իր մեջ ամփոփում է բոլոր զինվորականների մտածումներն ու մաղթանքները. *«Սիրելի հայրենակիցներ, թանկագին հարազատներ ու մերձավորներ, շնորհավորում ենք յուրաքանչյուրիդ՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդի կապակցությամբ:*

Թող գալիք 2023-ը ազգային մեր ցավերին սպեղանի դնի, թող Սյունիքի բռնազավթված տարածքներն ազատագրվեն թուրքից, թող մեր երկրում (ի վերջո) թևածեն ստեղծագործ աշխատանքը, քրիստոնեական սերը միմյանց հանդեպ, համերաշխությունն ու միասնությունը: Իսկ հերոսական Արցախին, որ հայոց արժանապատվության խորհրդանիշն է եղել և մնում, տոկունություն:

Մենք էլ, հավատացեք, ուժեղ ենք, լավ ենք և հպարտ ենք, որ բախտորոշ այս ժամանակաշրջանում պաշտպանում ենք մեր սրբազան սահմանները:

Շատ կորուստներ ենք ունեցել՝ և՛ մարդկային, և՛ տարածքային, և՛ նյութական. այնպես որ՝ այլևս կորցնելու ոչինչ չունենք, նահանջելու տեղ չունենք...

Այդպիսի զգացողությամբ էլ կանգնած ենք սահմանին:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ Ծնունդ: Մինչև նոր հանդիպում...»:

Դե ինչ, միանում ենք հայոց զինվորականների սրտաբուխ շնորհավորանքին ու մաղթանքներին: Ու վերստին համոզվում՝ մեր ազգային հպարտությունը, մեր աչքի լույսը շարունակում է մնալ հայոց բանակը, որին պիտի վերաբերվենք համազգային բացառիկ սիրով, գուրգուրանքով և հոգածությամբ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Նախարար Գնել Սանոսյանին՝ Ներքին Հանդի երկու հիմնախնդրի մասին՝ գործնական քայլերի ակնկալիքով

Ամանորի նախօրեին մեր ստեղծագործական խումբը Ներքին Հանդ գյուղում էր...

Բնակիչների մտահոգություններին համառոտ անդրադարձ ենք կատարել, սակայն անհրաժեշտություն է առաջացել մեկ-երկու հարցի վրա հրավիրել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանի ուշադրությունը:

Ադրբեջանցիների 2022 թ. մարտյան և հատկապես սեպտեմբերյան ագրեսիայից հետո Ներքին Հանդում նոր իրավիճակ է...

Նախ՝ խախտված է գյուղի ջրամատակարարման համակարգը. խոսքը խմելու ջրի մասին է: Եվ մարդիկ ստիպված են հիմնականում խմելու ջուր վերցնել Բասուտա գետից:

Մինչդեռ գյուղացիները պնդում են, թե 1-1.5 կմ հեռավորությամբ գտնվող ջրաղբյուրների միջոցով կարելի է լուծել բնակավայրը խմելու ջրով կանոնավոր ապահովելու հարցը:

Հաջորդ հարցն առնչվում է գյուղի գերեզմանոցին. սեպտեմբերի 13-15-ին թուրքերը բռնազավթել են նաև այդ տարածքը, և մարդիկ զրկվել են իրենց հարազատների շիրիմներին այցելելու հնարավորությունից:

Գյուղացիները հնարավոր են համարում տարածքում տեղաբաշխված ՌԴ սահմանապահների միջնորդությամբ՝ այսպես կոչված հումանիտար ճանապարհի բացումը՝ գյուղի մերձակայքից մինչև գերեզմանոց. խոսքը մի քանի հարյուր մետրի մասին է:

Բանն այն է, որ հույժ կարևոր այդ խնդիրներով որևէ մեկը լրջորեն չի զբաղվել կամ եթե նույնիսկ զբաղվել է, ապա չի հաջողել դրական արդյունքի հասնել: Նախարարի ուշադրությունը հրավիրելով այդ խնդիրների վրա՝ ակնկալում ենք գործնական քայլեր:

Առանց այդ էլ Ներքին Հանդում բնակվելը մեծ ռիսկեր է պարունակում, պատահական չէ, որ երեխաները տեղափոխվել և Ծավի դպրոցում են կրթությունը շարունակում, կանանց մեծ մասն էլ ժամանակ առ ժամանակ է գյուղ այցելում: Եվ եթե գյուղի լուծելի խնդիրներն անցած չորս ամսում չեն լուծվել, ապա տարակույսների և անորոշության մշուշն ավելի է խտանում երկփեղկված այդ բնակավայրում: Այնպես որ՝ նախարարի գործնական քայլերն ենք ակնկալում...

«Թուրքի աչքը պիտի հանենք և մեր տների լույսը վառ պահենք». հայտարարում են թշնամական աքցանի մեջ հայտնված Ներքին Հանդի կանայք

Դեկտեմբերի 27-ին Ներքին Հանդում էինք... Այնտեղ, ինչպես ասել ենք քանիցս, միանգամայն նոր իրավիճակ է սեպտեմբերի 13-15-ի եռօրյա պատերազմից հետո...

Գյուղի ամբողջ մերձակայքը՝ բարձունքներով, ռազմականացված մեծ պլացդարմ է դարձել՝ ակնհայտորեն երևացող անթիվ-անհամար ճանապարհներով, մարտական դիրքերով...

Եվ այնքան խիտ են ճանապարհներն ու հենակետերը, որ տարածքին անծանոթները դժվարությամբ կկողմնորոշվեն՝ որտեղ են մերոնք, որտեղ՝ թուրքերը...

Անսովոր և անօրինակ այս «խճանկարը» հանգամանալից դիտարկելուց հետո անհնար էր չնկատել, թե որքան մեծ աշխատանք է կատարվել մեր դիրքերի ամրակայման, հզորացման ուղղությամբ, ինչը հույսի շող է արթնացնում մեր մեջ: Եվ, այդուհանդերձ, շփման գծից երբեմն-երբեմն կրակոցներ են լսվում, բայց գյուղը չլքած բնակիչների համար դրանք այլևս սովորական են դարձել ու սարսափ չեն ներշնչում...

– *Կրակոցներ միշտ էլ լինելու են. մենք էլ մեր գյուղում, մեր տներում ապրելով, գյուղի երբեմնի առօրյան վերականգնել փորձելով պետք է պատասխան տանք թշնամուն, գյուղում ապրելով ու արարելով ցույց տանք, որ կանք ու լինելու ենք,* – ստեղծված իրավիճակին դիմակայելու նման բանաձև է առաջարկում Լուսինե Բաբայանը՝ Ներքին Հանդի վարչակազմի օպերատորը:

Զրուցակիցս այնուհետև հավելում է. *«Նոր տարին անպայման գյուղում ենք նշելու, իհարկե, տոնածառ զարդարելու սիրտ չունենք, քանզի ավարտվող տարում այս հողը կրկին մեր հերոս տղաների արյամբ է շաղախվել, բայց տոնական սեղան պատրաստելու ենք, գյուղի լույսերն ենք վառելու՝ վերստին ցույց տալու, որ Ներքին Հանդն անմնված է»:*

Ռազմիկ Բաղդասարյանը, Գագիկ Բաղալյանը և մյուս համագյուղացիները համաձայն են ապրելու այդ բանաձևին: Համեստ հայրապետյանը ոչ պակաս վճռական է. *«Թուրքի աչքը պիտի հանենք և մեր տների լույսը վառ պահենք»:* Տիկին Համեստի խոսքերին միգուցե առանձնահատուկ նշանակություն չտայինք, եթե չիմանայինք, որ ամուսինը մահացել է 2022-ի սեպտեմբերյան պատերազմից առաջ, սակայն գերեզմանի տարածքը թուրքի կողմից զավթված լինելու պատճառով ոչ միայն չի կարողացել նրա քառասունքը նշել, այլև չորս ամիս շարունակ չի կարողանում այցելել ամուսնու շիրմին:

Ի դեպ, տղամարդկանց մեծ մասը գյուղում է, կանանց մի մասը՝ նույնպես, ոմանք գնում-գալիս են: Գյուղի վեց դպրոցականներն էլ, որ ուսումը շարունակում են Ծավում, նույնպես գնում-գալիս են...

Հայրենի բնօրրանին մինչև վերջ տեր կանգնելու հանդեցիների վճռականությունը ստիպում է նրանց՝ տիրոջ սրտացավությամբ ու հետևողականությամբ բարձրացնել գյուղի հիմնախնդիրները, որ բազմապատկվել են սեպտեմբերյան պատերազմից հետո:

Մարդիկ զարմանք են հայտնում. մի՞թե հնարավոր չէ գյուղի մերձակայքում տեղաբաշխված ՌԴ զինվորականների օգնությամբ հումանիտար միջանցքի պես մի ճանապարհ բացել գյուղի գերեզման գնալ-գալու համար:

Խմելու ջրի խնդիրը... Բոլորը՝ ամենավերևից մինչև ամենաներքև, տեղյակ են խնդրին, բայց... Բնակիչները շարունակում են խմելու ջուր վերցնել Բասուտա գետից: Ու զարմացած հարցնում են՝ մի՞թե հնարավոր չէր սեպտեմբերից մինչև հիմա շատ թե քիչ կարգավորել այդ խնդիրը:

Գյուղում ցավ են ապրում, որ հին գյուղի եկեղեցու մոտ, նաև Մեծ հայրենականում զոհված հանդեցիների հիշատակը հավերժացնող հուշարձանի կողքին ադրբեջանցիները մարտական դիրքեր են կառուցել:

Ցավ են ապրում, որ գյուղի արոտները հիմնականում բռնազավթված են և առայժմ անասնապահությամբ զբաղվելու հնար չունեն: Վանո Մելքումյանն էլ, որի 80-ամյակը լրանում է մի քանի օր հետո՝ հունվարի 1-ին, ցավ է ապրում. *«Թուրքերը եկան մեր դիմացի բարձունքները գրավեցին, ճանապարհներ կառուցեցին, հիմա էլ խճապատում են այդ ճանապարհները, դիրքեր և խրամատներ են կառուցում... Պետք է ամեն ինչ անել, որ գյուղի՝ մինչև սեպտեմբերյան պատերազմ ունեցած առօրյան գոնե մասնակիորեն վերականգնվի, այլապես Ներքին Հանդը «խարաբա» է դառնալու»:*

Կյանքի ութ տասնամյակում շատ բան տեսած ու փորձություններով անցած Վանո Մելքումյանը չի թաքցնում իր մտածումները. *«Թուրքի հետ միայն ուժով պիտի խոսել, թուրքն ուրիշ լեզու չի հասկանում»:*

Մի երևույթ էլ, որ ցավով նկատեցինք՝ սահմանապահ գյուղերում այնքան էլ ոգևորված չեն ռուս զինյալների ներկայությամբ, որոնց հենակետերը կարծեք շատացել են վերջին շրջանում: Փոխարենը նկատելի են այն մեծ հարգանքն ու պատկառանքը, որ տածում են հայոց բանակի զինվորականների ու մեր կամավորականների հանդեպ:

Ահա այսպիսի տրամադրություններ են թևածում Ներքին Հանդում՝ Ամանորից և Սուրբ Ծնունդից առաջ:

Մեր նախատոնական շրջագայությունը կիսատ կլիներ, եթե չայցելեինք Սոսիների պուրակ, չվայելեինք Բասուտա գետի խորհրդավոր լռությունը...

Հետո հաճույքով հյուրընկալվեցինք Գագիկ Բաղալյանի օջախում և միմյանց շնորհավորեցինք գալիք տոների կապակցությամբ՝ երազելով այն օրը, երբ Սյունիք ներխուժած թշնամին կշպրտվի հայոց սահմաններից դուրս:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ. «... Ու եթե, Աստված չանի, զոհվելու ենք, ապա՝ մեր հողի վրա. սա է արցախցու որոշումը»

Սկիզբը՝ էջ 1

բռնակցել Ադրբեջանին, 1980-ականների վերջերին դիմել ենք Գորբաչովին, ով ասել էր՝ ազգային հարցը Խորհրդային Միությունում լուծված չէ, մենք էլ ոգևորված (հայ-ղարաբաղցի մարդիկ ենք) վերցրել նամակ ենք գրել, բայց էլի հարցը չեն լուծել, նույնիսկ Գուրգեն Գաբրիելյանը հարցնում էր. «Товарищ Михалков, как будет решен Карабахский вопрос, хоть малейший надежды есть?»: Միխալկովն ասում էր. «Ну что ты, почему малейший, есть большая надежда, розовая надежда», այլապես ինչո՞ւ պիտի Կենտկոմում ստեղծեինք ազգային հարցերով զբաղվող բաժին... Այ այսպիսի ոգևորություն էր, բայց նորից խաբել են մեզ: Հետագա գործողությունների ընթացքում Ռուսաստանը նավթի, գազի հետևից է գնացել, ու մենք տանուլ ենք տվել...

– Վառելիքի բացակայություն, սննդի և դեղամիջոցների դեֆիցիտ, հիվանդներին Երևան տեղափոխելու անհնարինություն... Կարելի է ենթադրել, թե ինչ վիճակում է մարդկանց տրամադրությունը, բայց Ձեր տպավորություններն ու դիտարկումները կուզենայինք լսել:

– Արցախի ժողովուրդն այսօր պատրաստ է անգամ սոված, տկլոր նստել, բայց լինել իր հողում, իր հոգսը հոգալ ու մնալ: Բայց արդյո՞ք Ադրբեջանը կբավարարվի միայն շրջափակումով, իհարկե ոչ, շրջափակումը կանխորոշիչ քայլերից մեկն է: Ադրբեջանցիների ձեռքերը ցանկացած ժամանակ ազատ են, կարող են ռուսական խաղաղապահների մասնակցությամբ գալ և հաշվեհարդար տեսնել, ռազմական գործողություններ անցկացնել և այլն: Իսկ ռուս խաղաղապահների ձեռքին ավտոմատները եթե չեն գործում, ուրեմն դրանք խաղալիք են. էլ ի՞նչ խաղաղապահ, եթե կարող է սովորական մարդկանց մի խումբ գալ ու ճանապարհը փակել: Եվ եթե այնքան ուժ չունենանք, որ գնանք այդ բախտախնդիրներին ասենք՝ հարցերը կարելի է սեղանի շուրջ լուծել, ուրեմն... Եվ եթե չենք կարողանում ճանապարհը փակողների առաջն առնել, ռուսական այդ խաղաղապահներն էլ գործնական քայլեր չեն ձեռնարկում, ապա ի՞նչ խաղաղապահ: Ասել է թե՝ խաղաղություն չկա արդեն... Մարդիկ մահանում են դեղերի պակասից, հիվանդության պատճառով: Վիրահատության պիտի գնան, չեն կարողանում, ընտանիքները կիսված են, մեծ մասը Երևանում է, մյուսները Սյունիքում են, Գորիսում, այլուր: Ահավոր իրավիճակ է, բայց նորից եմ ասում՝ եթե մի ձեռքով ծառից կախված էլ լինենք, դիմադրելու ենք ու մինչև վերջին շունչը պայքարելու, ուրիշ ճանապարհ չունենք, այլընտրանք չկա: Դրա համար Հայաստանի, Արցախի իշխանությունները, իրենց հակասությունները մի կողմ պիտի թողնեն, միաբանվեն, եթե կարիք կա՝ հանգանակություն անեն, դիմեն Սփյուռքի մեր հայրենակիցներին: Հայրենիքը մարդն է, եթե մարդն անպաշտպան է, ուրեմն հայրենիք չկա, հայրենիք գոյություն չունի: Բոլորը խոսում են հայրենասիրությունից, թեև մեկը մյուսին տանել չի կարողանում: Գոնե այս ճգնաժամային, ծայրահեղ, օրհասական պահին հակասությունները, հարցերը մի կողմ թողնենք ու միաբանվենք: Միայն միաբանվելու ճանապարհով պիտի գնանք: Եթե ավելի ուժեղ չլինենք զենքով, քան Ադրբեջանը, խաղաղություն չի լինելու, և ոչ մի դիվանագիտություն չի գործելու...

– Հակառուսական քարոզչությունն է թափ առնում մեզանում: Ձեր վերաբերմունքը, մի՞թե բախտորոշ այս պահին իրավունք ունենք կամ ի վիճակի ենք կասկածի տակ առնելու հայ-ռուսական հարաբերությունները:

– Չեմ ուզում կասկածի տակ դնել, բայց ուզում եմ ասել՝ մի քանի օր առաջ Դուք տեսաք՝ ՄԱԿ-ում քննարկում եղավ, Ռուսաստանը պաշտպանեց Ադրբեջանին, կարող էր ձեռնպահ մնալ, բայց չմնաց, պաշտպանեց Ադրբեջանի շահերը: Օրեր առաջ պետք է արտգործնախարարները հանդիպեին Մոսկվայում, և ճիշտ են արել մերոնք, որ չեն գնացել, ճանապարհներն այս վիճակում՝ ո՞նց գնային: Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է, թե ճանապարհը կիսով չափ բաց է կամ համարյա բաց է, և Ռուսաստանի արտգործնախարարությունը նրանց բերանից խլում ու նույն սուտը բարձրաձայնում է ավելի պատվավոր ամբիոնից: Կարո՞ղ են չէ՝ ռուսական քաղաքականության ներկայացուցիչները զանգահարել իրենց խաղաղապահներին ու հարցնել՝ ինչպիսի՞ն է վիճակը, և նրանք էլ կասեն, թե ինչպես է: Ռուս ժողովուրդը միշտ մեզ հետ է եղել, բայց ռուսական իշխանությունները մեզ հետ չեն: Սա պետք է գիտակցենք: Ասում ենք ռուսը մեզ բաց չի թողնի, բայց ռուսը վաղուց է մեզ բաց թողել, ռուսն իր շահի հետևից է գնում, և նրան չենք կարող ոչնչում մեղադրել, ամեն մեկն իր շահն ունի, դա բնական է, մենք էլ պետք է մեր շահը գիտակցենք:

– Այս իրավիճակում ի՞նչ կոնկրետ ակնկալիք ունեք Հայաստանի Հանրապետությունից, Սփյուռքից:

– Ես նրանցից եմ, ովքեր հավատում են մեր ժողովրդի, Հայաստանի ներուժին: Հայաստանն Արցախի լինելիության երաշխավորն է, եթե անգամ չի բարձրաձայնում: Սփյուռքահայությանն էլ հավատում եմ այնպես, ինչպես ինքս ինձ եմ հավատում: Ամերիկայի վերաբերմունքի մեջ էլ այս վերջին տարիներին որոշակի հալոց կա, որոշակի դրական վերաբերմունք, նույնը կարող եմ ասել Ֆրանսիայի մասին, գուցե մի քիչ ավելի շատ: Բայց նրանց մարդասիրությունը կոչերից, լոզունգներից այն կողմ չի անցնում: Պատերազմի ժամանակ, շրջափակման մեջ, ինչքան էլ գեղեցիկ լոզունգներ ու կոչեր հնչեն, այդ ամբողջը մի փամփուշտ չարժե, որովհետև մեզ հարկավոր է փրկություն, իսկ այդ փրկությունը մեր զինված լինելն է: Եթե զինված լինենք՝ թշնամին մեզ հետ հաշվի կնստի, մեր դիվանագիտությունն էլ կկարևորվի, բայց հիմա, քանի որ անպաշտպան ենք, ցանկացած սադրանքների դիմում է: Եթե այսօր ճանապարհը բացի, վաղը մի ուրիշ տեղ է փակելու, ուրիշ սադրանք է անելու: Հիշենք Փառուխի բարձունքները, Հայաստանի սահմանի մի շարք բարձունքներ. բոլորը համաձայնությամբ են տրվել նրանց, իսկ մեր տղաներին ասում էին՝ մի կռվեք, մենք խաղաղապահ ենք, չենք թողնում կռվեք:

Ժամանակն է գիտակցելու՝ մեր ժողովրդի շահն առևտրի ենթակա չէ, մեր ժողովրդի շահը ոչ մի գործարքի ու ոչ մի քաղաքական լոյալության ենթակա չէ: Մեր ժողովրդի շահն ամենագլխավորն է, ամենակարևորը ու մեր կյանքից էլ թանկ է: Եթե մենք այդ սկզբունքով չառաջնորդվենք՝ կորած ենք:

– Շատ թե քիչ հասցեական հայտարարություններ ենք լսում աշխարհի տարբեր ծագերից. Ադրբեջանից պահանջվում է դադարեցնել Լաչինի միջանցքի շրջափակումը, իսկ Ադրբեջանն անդրդվելի է, ինչպե՞ս բացատրել:

– Ադրբեջանցու բնավորությունը գիտենք, նրանք միշտ էլ այդպիսին են եղել, նույնիսկ խորհրդային տարիներին, խաղաղության տարիներին, միշտ էլ սադրանքներ են արել, անթույլատրելի արարքներ են գործել, հիմա էլ անում են, իսկ ռուսները կրկնում են նրանց ասածը: Չախարովան մեզ է վերադարձնում այն ամենը, ինչ ասում են ադրբեջանցիները:

Դեկտեմբերի 25-ին կազմակերպված միտինգը հետաքրքիր էր նրանով, որ ժողովուրդը նորից դրսևորեց իր ակտիվ վիճակը, հավաստեց՝ պատրաստ է թեկուզ մահվան գնով ոչ մի տեղ չգնալ, մնալ Արցախում, պաշտպանել երկիրը:

Մեր առաջնորդներից մեկն էլ՝ Ռուբեն Վարդանյանը, ով բավականին լավ անհատականություն է, ով այս տխուր, այս դաժան ժամանակներում կարողացավ բարձր մակարդակով ներկայանալ ու իր ժողովրդի կողքին կանգնել, մեզ հույս է ներշնչում: Ժողովուրդն էլ նրան սիրում է, որովհետև կարճ ժամանակում նրա կատարած գործերի տրամաբանությունը մեզ հուշում է՝ կարող ենք արժանապատվորեն դիմակայել մարտահրավերներին: Նորից եմ ասում՝ որքան թույլ լինենք, խեղճ ու կրակ, որքան խնդրողի դերում լինենք, ոչ ոք մեզ չի հետևելու, ոչ ոք մեզ չի լսելու, լինելու ենք մոռացված, մնալու ենք ոտքի տակ ընկած: Իսկ եթե կարողանանք համախմբվել... Հայաստանում համախմբման մասին բոլորն են խոսում, բայց չեն համախմբվում, ասում են դասեր առնենք, բայց ոչ մեկը դաս չի առնում, ամեն մեկն իր ձին է քշում, ամեն մեկն իր գրպանի հետևից է գնում...

Եթե այսօր Հայաստանի ու Արցախի ունևորների գրպանների եղածը հավաքենք, ապա կարող ենք դառնալ գերհզոր տերություն, բայց չեն անում...

Ճիշտն ասած՝ տարիքս, առողջությունս շատ բան թույլ չեն տալիս, բայց մտածել եմ՝ հայ ժողովուրդն անելանելի իրավիճակներում իր միջից միշտ հանել է մի հզոր մարդու, ով փրկել է երկիրը, այսօր այդ մարդկանցից մեկը Ռուբեն Վարդանյանն է: Տա Աստված, որ այս մտածումներս իրականանան...

Ժամանակին ճեղքումը սկսվել է Հայաստանից, և Հայաստանից էլ պիտի լինի փրկությունը, այսօր պետք է բոլորով միասին լինենք, ով ինչ ունի՝ պետք է բերի մեջտեղ, որպեսզի կարողանանք պահել երկիրը...

Արցախը նրանց կոկորդին է մնացել. եթե կարողանային մարսել՝ վաղուց Հայաստանը ոչնչացրած կլինեին, բայց չեն կարողանում, դրա համար էլ դիմում են սադրանքների:

Ամեն մի արցախցի այսօր պատրաստ է թեկուզ մահվան, կյանքի գնով պահել իր հողը, կանգնել իր հողի վրա ու եթե, Աստված չանի, զոհվելու ենք, ապա մեր հողի վրա պիտի զոհվենք. սա է արցախցու որոշումը, այլ որոշում չունենք:

– Շնորհակալ եմ զրույցի համար, Դուք, անգամ այդ ծանր վիճակում, ոչ միայն ոգևորում եք մեզ, այլև ապրեցնում:

Դեկտեմբերի 31-ին, ավանդույթի համաձայն, այցելելու ենք Տաթևի վանք, այնտեղ մոմ ենք վառելու և աղոթելու ենք Արցախի համար, նաև Ձեզ համար...

– Հուզվեցի... Ինքս էլ կուզենայի Տաթևի վանքում մոմ վառել:

– Աստված հայոց Արցախին պահապան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Դավիթ Դանիելյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

Սկիզբը՝ էջ 2

Չե՞ք կարծում, որ մայրաքաղաքում թևածող հակառուսական քարոզչությունն իր ընդերքում վտանգներ ու ռիսկեր է պարունակում Արցախի, ինչպես և Սյունիքի համար:

– Ռուսաստանի Դաշնությունը մեր ռազմավարական դաշնակիցն է, մենք ունենք ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային համագործակցության հարուստ պատմություն, և մեր հանրությունն ունի պատմականորեն ձևավորված սպասելիքներ ռազմավարական դաշնակցից: Սակայն Ռուսաստանի չեզոքությունը, որոշ առումով պասիվ գործելաոճը, ստանձնած պարտավորությունների ոչ լիարժեք կատարումն օբյեկտիվորեն հարցեր են առաջացնում բոլորիս մեջ: Ցավոք, այդ հարցերից շատերը, գուցե՝ ամենակարևորները, մնում են անպատասխան կամ ստանում են լղոզված պատասխան ռուս գործընկերների կողմից: Չենք կարող ձևացնել, թե ամեն բան կարգին է: Հենց Արցախի և Սյունիքի անվտանգության համար էլ բարձրացվում են այդ հարցերը:

– Սյունիքում իրականացվող տարածքային քաղաքականության մեջ տարօրինակություններ ենք նկատում...

Մայրաքաղաքից խոստանում են Ներքին Հանդում նոր դպրոց կառուցել, և դա այն դեպքում, որ դպրոցական նորմալ շենք կա այնտեղ, բայց երեխաներ չկան, եղածն էլ ամիսներ շարունակ կրթություն է ստանում մոտակա Ծավում:

Տաթև-Լծեն շրջանցող ճանապարհ ենք կառուցում՝ բազմաթիվ հարցերի տեղիք տվող: Եվ դա այն դեպքում, երբ համեմատաբար աննշան ծախսերով կարող էինք վերագործարկել Գորիս-Կապան մայրուղին (Մ2-ը)՝ շրջանցելով այսպես կոչված Էյվազլարի տարածքը, երբ կարող էինք Սատանի կամուրջ-Տաթև ճանապարհի մի քանի ոլորան (դարձյալ աննշան ծախսերով) բարեհարմար դարձնել: Ու երբեմնի խաչմերուկ Գորիսը չէր դառնա փակուղի բնակավայր:

2021-ին սկսել ենք Բարձրավանի և Շուռնուխի այլընտրանքային ճանապարհների կառուցումը, որոնք իբր ավարտին պետք է հասցվեին նույն տարում: Բայց ոչ միայն նույն տարում չենք ավարտել, այլև 2022-ին:

Մարդիկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող վարելահողերի ապօրինի օգտագործման մասին դիմումներ են հղում և՛ ԱԺ-ին, և՛ կառավարությանը, բայց իրավիճակը չի շտկվում, իսկ պետֆոնդի այդ հողերը շարունակում են մնալ իբրև ընտրական ռեսուրս մի քանի տղեկի ձեռքին...

Եվ ուրեմն՝ ո՞վ կամ ո՞ր ատյանն է Սյունիքի իրական շահերը և սյունեցիների իրական մտահոգությունները ներկայացնում Երևանին: Արդյո՞ք նման գործառույթներ ունեցող մարդիկ ճանաչում են իրական Սյունիքը, թե՞ իրազեկ լինելու պատրանք են ստեղծում:

– Հարցը բազմաբովանդակ է, փորձեմ անդրադառնալ բոլոր թեմաներին: Նախ նշեմ, որ Սյունիքի շահերը սպասարկում են տեղական և պետական բոլոր կառույցները, գուցե կան հակասություններ և խնդիրներ, բայց դրանք հարթվում, շտկվում են ժամանակի ընթացքում: Ես իմ մասով կարող եմ ասել, որ սպասարկում եմ բացառապես Սյունիքի և սյունեցու շահը:

Ճանապարհի մասին կասեմ հետևյալը. տեղյակ եմ, որ ճանապարհի տեղանքի

Շարունակությունը՝ էջ 6

ՀՊՄԿ-ն՝ Հայաստանի տնտեսության լոկոմոտիվ

Սկիզբը՝ էջ 1

միայն ՄՏՍ Հայաստանն է, որ 4.18 տոկոս անկում է գրանցել: Չորրորդ տեղում գտնվող Ինտերնեյշնլ Մասիս Տաբակն ավելի է վճարել 5.27 տոկոսով, երրորդ տեղում Գրանդ Տոբակոն է՝ 9-ամսյա կտրվածով հարկերի աճի 31.07 տոկոսով, Գազպրոմ Արմենիան էլ ավելի է վճարել՝ 9.24 տոկոս:

Հարկատուների առաջատարը և միակ ընկերությունը, որը վճարած հարկերով հատել է 100 միլիարդ դրամի ցուցանիշը, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է. հունվար-սեպտեմբերին, շնորհիվ աշխատանքի և վերահսկողության արդյունավետության, պետբյուջե է վճարել 129.16 միլիարդ դրամ, իսկ 2021-ի համեմատ վճարումների աճը կազմել է 204.93 տոկոս:

Տարեկան կտրվածքով ՀՊՄԿ-ի ցուցանիշն ավելին կլինի: Փաստացի՝ Հայաստանում հավաքված բոլոր հարկերի մոտ 10 տոկոսը կամ ավելին վճարել է միայն մեկ ընկերություն, որը վաղուց դարձել է Հայաստանի տնտեսության լոկոմոտիվը:

PAST.AM

Արմեն Հակոբջանյանը նշանակվել է Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակելու մասին: *««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 102-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝ Արմեն Հակոբջանյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնակատար»,* – ասված է վարչապետի որոշման մեջ:

30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Սիսիան համայնքում տեղի կունենան ավագանու արտահերթ ընտրություններ

ՀՀ կառավարության դեկտեմբերի 29-ի որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է Սիսիան համայնքի ավագանու լիազորությունները: Համայնքում նշանակվել է ավագանու արտահերթ ընտրություններ՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների անցկացման կարգով: Առաջարկվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ շաբաթյա ժամկետում նշանակել Սիսիան համայնքի ավագանու ընտրության անցկացման օրը:

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Դավիթ Դանիելյանը պատասխանում է «Սյունյաց երկրի» հարցերին

Սկիզբը՝ էջ 5

և երթուղու ընտրությունը կապված է ռելիեֆի առանձնահատկությունների և անվտանգության գործոնի հետ: Իսկ շինարարական աշխատանքները ձգձգվել են եղանակային պայմանների պատճառով, շինարարական ընկերությունների հետ այս հարցերը կարող եք մանրամասնել:

Դպրոցի մասին. բնականաբար մենք ուզում ենք տեսնել ուժեղ և անվտանգ գյուղեր, այդ պատճառով որոշում էր կայացվել Ներքին Հանդում կառուցել դպրոց, սակայն անվտանգային իրավիճակի փոփոխությունը նոր իրողություններ ստեղծեց, հնարավոր է քննարկումների շնորհիվ տեղի ունենան փոփոխություններ:

Հողային խնդրին ծանոթ եմ, արդեն մամուլով անդրադարձել եմ այդ խնդրին և դրա լուծման համար իմ կողմից իրականացված աշխատանքներին: Ոլորտի պատասխանատու նախարարը զբաղվում է դրանով, ես ուշադրության կենտրոնում եմ պահում այդ հարցը և անպայման առաջիկայում մեր քաղաքացիներին կտեղեկացնեմ զարգացումների մասին:

– Հազար անգամ փորձեցինք ճշտել՝ 2021-ին Սյունիքին հատկացված մոտ 1.5 մլրդ դրամ սուբսիդիան կոնկրետ (հասցեական) ի՞նչ նպատակով է օգտագործել «լուսահոգի» աշխատանքային խումբը՝ այսպես կոչված Սյունիքի խնդիրներով զբաղվող: Եվ ոչ մի հոդաբաշխ պատասխան... Հետո՞:

– Այդ հարցը ճիշտ կլինի ուղղել հենց աշխատանքային խմբի ղեկավարին, քանի որ մասնակցել եմ մի քանի նիստի և մի քանի հստակ ծրագրերի մասին եմ տեղեկացված:

– Մայրաքաղաքային մամուլը շարունակում է գրել Սյունիքի գործող մարզպետի և Ձեր հակասությունների մասին: Որքանո՞վ է իրական այդ խոսակցությունը:

– Ես ԱԺ-ի Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, շրջակա միջավայրի և գյուղատնտեսության հարցերով հանձնաժողովի անդամ եմ և աշխատում եմ բոլոր մարզպետների հետ, եթե կա անհրաժեշտություն, որևէ մարզպետ ինձ հետ խնդիրներ չի կարող ունենալ: Գրեթե բոլոր հարցերը՝ այդ թվում Սյունիքի հետ կապված, ուղղում եմ ոլորտի նախարարին, ով հաճախ է աշխատանքային քննարկման գալիս ԱԺ և մասնակցում մեր հանձնաժողովի նիստերին: Ես առնչվում եմ հիմնականում նախարարի հետ, մարզպետների հետ առնչվելու առիթներ գրեթե չեն էլ լինում:

– Եվ, այդքանով հանդերձ, դրական ի՞նչ գործեր են արվել Սյունիքում ավարտվող տարվա ընթացքում:

– Բազմաթիվ սոցիալ-տնտեսական ծրագրեր են իրականացվել, որոնք դրական եմ գնահատում: Կարծում եմ՝ յուրաքանչյուր բնակիչ նկատել է փոփոխություններ իր բնակավայրում: Սակայն ես սիրում եմ խոսել ոչ թե արված գործերի մասին, որոնք պետությունը պարտավոր է անել, այլ դեռ չլուծված խնդիրների և առաջիկա նախագծերի մասին: Այս պահին բազմաթիվ բնակավայրերում կան անվտանգային, կրթական, հողային և սոցիալական բազմաթիվ խնդիրներ, որոնք արձանագրում եմ իմ բոլոր այցերի ընթացքում ու դեռևս զբաղվում եմ դրանցով: Երբ այդ խնդիրները լուծում ստանան, ես վստահորեն կխոսեմ դրականի մասին:

– Մի քիչ էլ Ձեր պատգամավորական գործունեության մասին. 2022-ին Ձեր արած-դրածը և՛ օրենսդրության ոլորտում, և՛ գործադիրին առնչվող հարցերում: Ի դեպ, մարզի բնակավայրերից ու կոլեկտիվներից դրական արձագանքներ ենք լսում հանրության հետ ունեցած Ձեր ակտիվ առնչությունների, հանրակրթության առջև ծառացած խնդիրների լուծման գործում Ձեր հետևողական գործունեության վերաբերյալ:

– Իմ գործունեությունը բավական թափանցիկ է, իրականացված աշխատանքներիս որոշ մասը պարբերաբար ներկայացնում եմ իմ ֆեյսբուքյան էջում: Կխոսեմ այն նախագծերի մասին, որոնք դեռ չեմ ներկայացրել հանրությանը: Այս տարի ընտրվել եմ Սահմանամերձ համայնքների զբաղվածության ապահովման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ և ակտիվ աշխատել եմ հիմնադրամի նախագծերի շրջանակներում: Իրականացրել ենք մշակութային, կրթական և սոցիալական բազմաթիվ նախագծեր: Կառանձնացնեմ Գեղանուշ գյուղի կարի արտադրամասի հիմնադրումը, որն իրականացվեց բավականին կարճ ժամկետում: Եկող տարի կվերապատրաստենք աշխատակիցներին, և արտադրամասի աշխատանքը կմեկնարկի: Մասշտաբային և լայնածավալ շինարարություն ենք սկսել Կապանի տարածաշրջանի գյուղերից մեկում, կառուցվում է Հայաստանում առաջին Էթնո-գյուղը, որը եզակի վայր է դառնալու թե՛ մշակութային, թե՛ զբոսաշրջային գրավչությամբ: 2023 թվականին ծրագիրը կներկայացնենք հանրությանը: Առանձնացրեցի այս երկու ծրագիրը, սակայն նմանատիպ ծրագրերը շատ են, և առաջիկայում դրանց մեկնարկը կտրվի:

Օգտվելով առիթից, շնորհակալություն եմ հայտնում ընկերներիս, բարեկամներիս, նաև գործընկեր կազմակերպությունների պատասխանատուներին՝ նման նախաձեռնությունների իրականացման գործում ինձ աջակցելու համար:

– Եվ, իհարկե, Ձեր խոսքը սյունեցիներին՝ Ամանորի և Սուրբ Ծննդի առիթներով:

– Սյունեցիներին կասեմ հետևյալը. գիտակցում եմ բոլոր դժվարությունները, որոնց հետ բախվում է մեր տունը, մեր հայրենիքը: Ցավոք, տարածաշրջանը չի խաղաղվում, իսկ Ադրբեջանի ագրեսիվ, հայատյաց քաղաքականությունը չի փոխվում: Այս իրավիճակում մենք պետք է լինենք ուժեղ և տոկուն: Այս Ամանորին շատերի ընտանիքներում աթոռներ են դատարկ լինելու, մենք այս տարի ևս ունեցանք հայրենիքի համար նահատակված եղբայրներ ու քույրեր, որոնց ընտանիքների կողքին պետք է ամուր կանգնենք, աջակից լինենք ու թույլ չտանք, որ նրանց օջախների լույսը մարի: Չեմ կարող դատարկ, ականջահաճո խոսքեր հնչեցնել, անկեղծ կասեմ՝ աշխատել է պետք, ընդգրկուն աշխատանք պիտի տանենք, որպեսզի ապահովենք մեր երկրի կայուն զարգացումը և անվտանգությունը: Մենք պետք է ամուր լինենք, պայքարենք ու անպայման կրկին հաղթենք:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ
28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

Մեղրեցի ճանապարհաշինարարների համար խոչընդոտ չէ անգամ Դիբագի լեռնանցքի անսովոր ձմեռը

Սկիզբը՝ էջ 2

տարելու համար, ծանրաբեռնվածությունը շատ էր: Մարզի ճանապարհաշինական ընկերություններին էլ ծանրաբեռնվածության մեծ բաժին էր ընկել: Ճիշտն ասած՝ փաստը, որ դրսի ընկերություններն են մեր մարզում մեծապես ճանապարհաշինարարություն իրականացնում, ուրախացնող է և ոչ մտահոգող:

– Որպես բազմահմուտ ճանապարհաշինարար, Ձեր կարծիքը կցանկանայիք իմանալ՝ արդյո՞ք կառուցվող ճանապարհների նախագծային աշխատանքները խելամիտ են կատարվում: Օրինակ, մեր դիտարկմամբ՝ Տաթև-Լծեն ճանապարհահատվածը կարելի էր 200 մետր ցածր նիշով կառուցել, բայց հիմա ծովի մակարդակից 2015 մետր բարձր տեղանքով է անցնում, ինչը ձմռան ամիսներին կարող է խնդիրներ առաջացնել: Նույնը կարելի է ասել Կապան-Ճակատեն հատվածի վերաբերյալ: Ասես նախագծային աշխատանքներն իրականությունից կտրված լինեն: Սա, իհարկե, լրագրողական տպավորությունն է, որ կարող է նաև սուբյեկտիվ լինել:

– Այդ դիտարկմանը համաձայն չեմ, որովհետև ճանապարհը նախագծողը պատասխան պետք է տա իր նախագծածի համար: Այլ բան է, երբ շտապողականությունը որոշակի շեղումների է հանգեցնում: Չեմ կարծում, որ նախագիծը որևէ դեպքում օպտիմալ չլինի: Օրինակ, ասում եք՝ եթե Տաթև-Լծեն ճանապարհին այդքան բարձր նիշով չանցներ, ձմեռային սպասարկումը դյուրին կլիներ: Այդտեղ «թափառող» քամիները, որքան տեղյակ եմ, հաճախադեպ են, իսկ որքան ցածր է անցնում ճանապարհը, բնականաբար, քամիներն ավելի շատ դժվարություններ են հարուցում: Մի խոսքով՝ ավելի հեշտ է աշխատել լեռնանցքի ամենաբարձր հատվածում, քան ցածրում:

– Տարիների փորձը ցույց է տալիս, որ Մ2 մայրուղու Գորիս-Սիսիան հատվածում ձմռան տարեշրջանում խնդիրներ են առաջանում՝ ձնաբքի հետ կապված: Երբեմն ժամերով և նույնիսկ օրերով փակված է Արցախն ու Սյունիքը մայրաքաղաքին կապող այդ մայրուղին: Խորհրդային տարիներին տվյալ ճանապարհի երկայնքով «ցանկապատեր» էին տեղադրվում, որ չէր թողնում ձյունը լցվեր ճանապարհը, հիմա դրանք չկան, ի՞նչ անել:

– Իսկ ե՞ք հիշում, որ այդ ձնապատնեշներն ուժգին բքի ժամանակ «անզոր» էին լինում, ձյունը լցվում էր ճանապարհը, և այն փակվում էր:

– Իսկ Ձեզնից՝ մասնագետից, կուզեինք իմանալ՝ ո՞րն է «դեղատոմսը»:

– Ձնապատնեշները, իրոք, մեծ նշանակություն ունեն, մանավանդ քամոտ տարածքներում, մասնավորապես Սիսիան-Գորիս հատվածում: Եթե հիշում եք, մի քանի տարի առաջ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի միջոցներով նույն այդ հատվածում պլաստմասսե ցանցեր տեղադրվեցին. դրանք որոշ իմաստով կատարեցին իրենց ֆունկցիան, չթողեցին ձյունը լցվի ճանապարհը, բայց... Որոշ ժամանակ անց չդիմացան քամու ուժգնությանը և շարքից դուրս եկան:

Չեմ ուզում որևէ ճանապարհաշինարարի թերագնահատել, որովհետև ինչքանով կարող են, այնքանով սպասարկում են ճանապարհը: Բայց եթե լինի շուրջօրյա հերթապահություն, եթե վարորդները ժամանակ առ ժամանակ անվադողերին շղթաներ ամրացնեն, ճանապարհն այնքան սարսափելի չի լինի: Միայն ճանապարհաշինարարով չէ պայմանավորված ճանապարհի բաց և անվտանգ լինելը...

– Քանիցս բարձրաձայնել եք, որ նախատեսվածից ավելի բեռնված մեքենաները մեծ վնաս են հասցնում ճանապարհի երթևեկելի հատվածին: Եվ հիմա ուզում են դրա առաջն առնել՝ Սիսիանում կշեռք են տեղադրել: Այդ գործընթացի արդյունավետությունը զգացվո՞ւմ է:

– Կշեռքի առկայությունը ճանապարհի երկարակեցության ապահովման երաշխիքներից է: Կշեռքը ոչ միայն Սիսիանում պիտի լինի: Ուրախ եմ, որ Վայքում էլ են կշեռք տեղադրելու, արդեն տարածք են հատկացրել: Կշեռք թող Քաջարանում էլ լինի, որովհետև մինչև Սիսիան գերբեռնված մեքենաները կարող են երթևեկել: Կարծում եմ՝ ժամանակի ընթացքում խնդիրը կկարգավորվի: Կան նաև «շրջիկ» կշեռքներ, յուրաքանչյուր պահի կարող են մեքենան կանգնեցնել և ստուգել բեռի քաշը...

Մեծ ցավ եմ ապրում, երբ գերբեռնված մեքենաների անիվների տակ ճանապարհը ծնկի է գալիս: Երեք-չորս տարի առաջ նորոգված ճանապարհներին ոչ մի ճեղք, ոչ մի նստվածք չեն լինում, իսկ անվահետքեր՝ որքան ասեք: Մեր չարչարանքը պարզապես ջուրն է լցվում:

– Սյունիքյան մեր իրականության մեջ դեպի մարտական դիրքեր տանող ճանապարհներն էլ չափազանց կարևոր են, քանզի որոշ դիրքեր գտնվում են ծովի մակարդակից 3000 մետր և ավելի բարձրության վրա: Կարողանո՞ւմ եք այդ ճանապարհների անցանելիությունն ապահովել. նկատի ունենք Մեղրու ուղղությունը:

– Առանց մեկ վայրկյան հապաղելու կարող եմ ասել՝ լուրջ փոփոխություններ են տեղի ունեցել և ունենում դիրքերի ամրապնդման ոլորտում: Երբեմն նույնիսկ թվում է, թե մենք ճանապարհաշինարարությունից պիտի ժամանակավորապես հեռանանք և զբաղվենք հայոց բանակի համար այնքան կարևոր ամրաշինական գործերով, քանզի մեծածավալ ծրագրեր կան: Եվ, այդուհանդերձ, կցանկանամ, որ աշխարհն այնքան խաղաղ լինի, որ նման կառույցների անհրաժեշտություն չզգացվի: Բայց իրականությունն այլ բան է հուշում. կա խնդիր, դրան լուծում պիտի տրվի...

– Ազատ Բենիամինի, աշխարհը խառնվել է, ամենուր պատերազմներ և հակամարտություններ են, լոգիստիկ դժվարություններ են ծագել, նաև ապրանքների թանկացումներ են արձանագրվում, այդ թվում՝ շինանյութերի: Այդ դժվարությունները, ենթադրում ենք, անդրադառնում են նաև Ձեր ընկերության գործունեությանը: Ի՞նչ կասեք այդ առումով:

– Որպես տնտեսվարող սուբյեկտ՝ կասեմ, որ այդ ամենն ազդեց մեր գնային առաջարկների վրա: Բայց Մեղրին մոտ է Իրանի սահմանին, գուցե այդ հանգամանքով է պայմանավորված, որ մեզ մոտ լուրջ գնաճ չեղավ: Որոշ չափով տուժեցինք այն առումով, որ Ագարակի մաքսակետում երբեմն խցանումներ էին լինում: Փաստը մի կողմից

Վարուժան Գալստյանի «Շղթայված հեղեղ»-ը

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆՅԱՆ

«Եւ Եհովայ Աստուածը արեւելքի կողմը Եդէմի մէջ մի պարտէզ տնկեց, եւ իր շինած մարդը դրաւ այնտեղ […] Եւ Եհովայ Աստուածն ասեց, լաւ չէ, որ մարդը մինակ լինի, նրա նման մի օգնական շինեմ իրան յարմար […] մի խոր քուն բերաւ Ադամի վերայ եւ նա քնեց: Եւ նորա կողի ոսկորներից մէկն առաւ, եւ նորա տեղը միս լցրեց: Եւ Եհովայ Աստուածն այն կողի ոսկորն, որ Ադամիցը վեր էր առել, մի կին շինեց, եւ նորան բերաւ Ադամի մօտ»:

Աստվածաշունչ մատյանի Ծննդոց գրքում այս գրվածքն այն օրերի մասին է, երբ բարեբեր զգացումները, հատկապես սերը, ոչ միայն շղթայված չէին, այլև հեղեղի պես թափվող երանություններով էին պարուրում Ադամին ու Եվային: Սիրո այդ օրերի մաքրամաքուր վեհությունը նկարագրելու համար հայոց լեզվի բառապաշարում համապատասխան բառ չգտնելով, այն գրում եմ մեծատառով: Սերն այդ օրերին Սեր էր, որովհետև նրա մեջ թագավորում էր համեստագույն մի զգացում՝ բարությունը: Եվ այդպես, դրախտի պարտեզում, սիրո ու բարության գիրկն ընկած, հրճվագին ապրումներով իր ժամանակն էր վայելում Աստծուց արարված Ադամը: Երանությունները ճախրում էին նրա շուրջը, և լիացնում հոգին անիմանալի սիրո ու բարության վայելքներով, որն էլ Ադամը կիսում էր Եվայի հետ:

Վայելք ասվածը, սակայն, Վարուժան Գալստյանի «Շղթայված հեղեղ» գրքի հերոս Սարգիս Դանիելյանի կամ նրա ժամանակակիցների համար չէ, որովհետև մեր նախահոր աստվածատուր երանություններով պարուրված վայելքներից այժմ արդեն հազիվ հազ մանր փշուրներ են մնացել կամ նույնիսկ՝ ընդամենը, մարմրող հիշողություններ՝ դրանց մասին:

Ադամին՝ իր օրերում պարուրող երբեմնի հզոր ու երանելի զգացումներից ահա իրեն հասած փոշեչափ փշուրներից սկսեց օգտվել Սարգիս Դանիելյանը, երբ արդեն տեղավորվել էր Բեռլինից Մոսկվա թռչող ինքնաթիռում: Սարգսին պատած երանության ու սիրո զգացումը, սակայն, այդ պահին վերաբերում էր այն բանին, որ Սարգիսը սիրում էր ինքնաթիռ նստել: Հենց այդ պատկերով էլ սկսվում է Վարուժան Գալստյանի «Շղթայված հեղեղ» գրքի պատմությունը՝ Սարգիս Դանիելյանի կյանքի մասին:

«Իսկ ի՞նչ կապ ունի մեր նախահայր Ադամը գրքի հերոս Սարգսի հետ», – կարող է հարցնել իմ վերոհիշյալ տողերն ընթերցողը: Կապ, իհարկե, ունեն Ադամն ու Սարգիսը՝ որպես Աստծուց սերված մարդ ու մարդկային շարունակության ներկայացուցիչ, բայց ունեն նաև մի շատ որոշիչ և մեծ տարբերություն:

Դրախտի Ադամի և երկրից ինը հազար մետր բարձրությամբ թռչող ինքնաթիռում գտնվող Սարգսի միջև տարբերությունն այն է, որ առաջինի կյանքը բաղկացած էր Աստծո կողմից բարությամբ իրեն շնորհված տարաբնույթ սիրո վայելքներից, որոնց մասին նա գաղափար իսկ չուներ, թե ինչպե՞ս, որտեղի՞ց են տրվում իրեն և ինչպե՞ս կամ ինչո՞ւ են ձգվում դեպի իրենից դուրս եղած հմայքները: Այսինքն, դրանք ժամանակներ էին, երբ նրա հետ գործող վայելքների համար ոչ մի խոչընդոտ կամ շղթա չկար: Վայելքը հեղեղի պես իր մեջ էր առնում Ադամին ու լողացնում նրան իր ջրերում: Իսկ ինքնաթիռում հարմարավետ տեղավորված ադամորդի Սարգիսը նա էր, ով գիտակցում էր, որ իր սիրո պատճառը երկինք բարձրացող ինքնաթիռի հռնդոցն է, շարժիչների սուլոցը, ամպերը, որոնք «սպասում էին ինքնաթիռին, և մոտենալով նրան՝ փախչում էին ահաբեկված ու հեռանում անհետ»:

Սերը՝ սեր, բայց մի քանի ժամ տևող թռիչքի ժամերը միայն նման ազդակներից եկող զգացումներով լցնելը քիչ էր, ուստի «Թռիչքի տևողությունը չզգալու համար Սարգիսը տրվեց հուշերին…»:

Խորհրդային հզոր երկրի վերջին տարիներն էին: Մոսկվայից քիչ հեռու, սաղարթախիտ անտառի՝ հինգ կիլոմետրանոց շառավղով արգելանոց-տարածքում գործում էր Պետական անվտանգության կոմիտեի բարձրագույն ակադեմիայի հատուկ դպրոցը, որն ուսումնառության տասը տարիների ընթացքում պատրաստում էր ունիվերսալ զինվորներ՝ պետության համար հատուկ նշանակության առաջադրանքներ իրագործելու նպատակով: Ահա հենց այս դպրոցից հեռացվելուց հետո սկսվեց Սարգիս Դանիելյանի կյանքի ոդիսականը, որը չէր կարող նման ձևով առաջ գնալ, եթե նա մնար այնտեղ՝ որպես հատուկ ծառայությունները գերազանց կատարող մարտիկ: Բայց, որքան էլ գերազանց, Սարգիսը ուներ մի հատկանիշ, որի մասին ցավով է նշում նրա հրամանատարը, դպրոցից հեռացման պատճառ բերելով հենց դա: «Այդ հատկանիշը,- ասում է հրամանատարը,- քո մեջ այնքան խոր է արմատավորված, որ մենք քո ուսումնառության յոթ տարիների ընթացքում չկարողացանք վերացնել»: Հատկանիշը, որի մասին խոսվում է՝ նախահայր Ադամից մեր Սարգսին փոխանցված նրա բարությունն էր:

Լսելով իր ճակատագիրը այսուհետ տնօրինող որոշումը և հասկանալով, որ բարձրագույն դպրոցից իր հեռացման առիթով նշանակված ընդունելությունը գնդապետի մոտ ավարտված է, «Սարգիսը դանդաղ քայլելով իջավ բակ, այնտեղից՝ սպորտդահլիճ, կախվեց օղակներից և սկսեց օրորվելով ինքն իրեն կրկնել՝ «Ես այսպիսինն եմ, այլ կերպ լինել չեմ կարող, ատո՛ւմ եմ իմ մեջ սերմանած դաժանությունը…»:

Սարգիսն ինքն էլ այդ պահերին չէր կարողանում, կամ՝ չէր ուզում հասկանալ, թե որտեղի՞ց, ինչո՞ւ էր ինքը հենց այդպիսին: Իր տեսակը նրա համար քննարկման չէր կարող դրվել ճիշտ այնպես, ինչպես Ադամը դրախտում չէր քննարկում, թե ի՞նչ անուն ունի իր կարգավիճակը, որտեղի՞ց, ինչպե՞ս, ինչո՞ւ է ինքը լցված անընդհատ բարեբանվող սիրառատ զգացումներով: Սարգսի համար դա մի վիճակ էր, երբ նա իր մեջ կրում էր Ադամից իրեն հասած սիրո ու բարության հիշողությունը: Այն Ադամի, որի գոյությունն ընթանում էր երանության անշղթա հեղեղների ուղեկցությամբ: Մեր ժամանակների Սարգիսն ինքը, անշուշտ, չէր դիմանա դրախտային ժամանակների երանությունների հեղեղին, ուստի այդ հեղեղների մասին հիշողությունը նրան տրվել էր՝ փաթեթավորված բարության, ներումի, տրամաբանված քայլերի նուրբ ու հմայիչ արվեստով: Սարգիսը տիրապետում էր այդ արվեստին և օգտագործում էր այն որպես իր ներսում գլուխ բարձրացնող հեղեղները հանգստացնող բանալի:

«Իսկ ո՞ւր մնաց Եվան»,- իրավացիորեն այստեղ կհարցնի իմ տողերին հետևողը, եթե ինքն անձամբ չի ընթերցել Վարուժան Գալստյանի «Շղթայված հեղեղ» գիրքը:

Եվան գրքում մի քանի անուններ ունի, որոնցով մի քանի անգամներ փորձել է մուտք գործել Սարգսի կյանք, բայց վերջինս նման պահերին շղթայել է այն հեղեղը, որ կարող էր դուրս հորդել իրենից և տակով անել մարդկանց աշխարհում ստեղծված կարգուկանոնը, պատվախնդրությունը, պատասխանատվությունը, երախտիքի զգացումը, հարգանքը ու նման շատ բաներ, որոնցով շղթայված են նաև իրենցից յուրաքանչյուրը առանձին-առանձին, ինքն ու այդ եվաները, ըստ Սարգսի՝ խելոք, բարի, աննման աղջիկ Հիլդան, մոսկվաբնակ Լենան, պարուհի Նադյան, տայգայի «լուսանը»՝ Օքսաննան: Նրանք՝ մարդկային լավագույն գծերով օժտված այդ աղջիկները, որ յուրաքանչյուրն իր հոգու խորքում սիրում էր Սարգսին որպես մարտարվեստի գիտակի, փրկարարի, թիկնապահի, գիտնականի կամ գեղեցկատես երիտասարդի, միևնույն ժամանակ, իրենք էլ իրենց հերթին շղթայելով թեկուզ մարմրող հիշողությամբ, բայց իրենց հասած վայելքի հեղեղները գնում են ավելի հարմար կյանքի ու ապագայի, իրենց հետ տանելով անթաքույց սերը՝ Սարգսի նկատմամբ: Նրանք կարողանում են շղթայել դրախտային Մեծ Սիրո արձագանքները, որոնք արդեն փոշու չափ եղած փշուրներ են դարձել ժամանակի մեջ: Հանուն ինչ-որ բանի կարողանում են շղթայել իրենց սիրո հեղեղը, բայց այդ ինչ-որ բանն անպայման մի տեղ ճաք է տալիս, որովհետև նրանք հենց այդպես են ուզում: Ճաք տված այդ անկյուններից էլ նրանց սրտերը մխիթարող լույսեր են հեղվում, որն այս դեպքում տարբեր կանանց նույն՝ Սարգիս անունով երեխաների գոյությունն է:

Մարտարվեստում հաղթող Սարգսի համար դժվար չէր ջարդել մեր ժամանակների եվաների սրտից բխող հեղեղների առաջը փակող շղթաները, բայց նա ոչ միայն ադամական բարության կրողն էր, այլև՝ կովկասցի հայի հպարտությունն էր խոսում նրա վարքի մեջ: Սարգիսը, իսկապես, պատրաստված մարտիկ էր, ով կարողանում էր անջատել զգացմունքները և հաղթել մարտում բարոյական կանոններով՝ իրադարձությունների կտրուկ փոփոխությունների ընթացքում: Իրադարձություններն ու մարտը, այնուամենայնիվ, գրքում վերաբերում են զուտ մարդկային կամ հակառակ սեռի հետ հարաբերությունները ճշտելու պահվածքին, որոնց ընթացքում Սարգսի ներսում սկսում են գործել երկկողմ հեղեղները խաղաղեցնող, բարության, ներումի ու նման զգացումների ֆոնին տրամաբանորեն իրար հագցվող շղթաները:

Այդպես՝ եվաները գալիս ու գնում են, բայց չեն մտնում Սարգսի կյանքի մեջ, մինչև երկկողմ իրար հասկանալու հեղեղը, որն այս անգամ իրար հետ սիրո շղթայով է կապում երկուսին՝ Սարգսին ու Իզաբելլային:

Աստվածարար Ադամի ու Եվայի նոր՝ մեր օրյա գոյության ձևը թեթևասահ արարներով ներկայացնող այս գիրքը, համոզված եմ, առանց ընդմիջման են ընթերցելու նրանք,

1. ովքեր սիրում են բնության նկարագրություններ, անկախ այն բանից, որ այստեղ նման նկարագրություններ չկան,

2. ովքեր իմաստասիրական ասույթներ կամ նման խոհեր են փնտրում գրքերի մեջ, անկախ այն բանից, որ այստեղ նման բաներ չկան,

3. ովքեր հերոսների կյանքի կենցաղային մանրամասներն են քչփորում, անկախ այն բանից, որ այստեղ ոչինչ մանրամասն չէ գրված,

4. ովքեր սենտիմենտի երկրպագուներ են, անկախ այն բանից, որ այստեղ դրանից նշույլ իսկ չկա,

5. ովքեր բուռն դրամաներ են սիրում, անկախ այն բանից, որ բանն այստեղ երբեք դրամատիկ չի դառնում,

6. ովքեր աշխարհաճանաչողական կամ աշխարհաքաղաքական գրվածքներ են փնտրում և այլն,

7. ովքեր նորարարություն են ուզում թե գիտելիքների, թե հարաբերությունների մեջ և այլն:

Այստեղ մի փնտրեք ձեզ հետաքրքրող այս կամ այն թեման, բայց՝ սկսեք կարդալ: Համոզված եմ, որ վերջին էջը փակելիս մի ժպիտ գալու, թառելու է ձեր շուրթերին, լուսավոր մի զգացում է իջնելու ձեր հոգու մեջ: Եվ դա այն զգացումն է լինելու, որ մեր ժամանակներում բազմազբաղ կամ հոգսերից հոգնած մարդկանց առաջարկում են վերալիցքավորող կամ այլ, արդեն հանրաճանաչ խոսքով՝ «ռելաքսի» տանող նյութերը:

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2022Թ.

Կուրախացնող էր, որ բեռնաշրջանառությունների ծավալն աճում է, մյուս կողմից նեղվում էինք, որ բիտումի կարիք ունենք, բայց բիտումով բեռնված մեքենաները հերթի մեջ են, իսկ մենք այդ շինանյութի կարիքն ունեինք…

– Ամփոփեք 2022 տնտեսական տարին, ինչո՞վ նշանավորվեց այն Ձեր ընկերության համար:

– Սկզբից շատ դժվար էր, ծրագրերի փաստաթղթավորումը շատ էր ուշանում: Քաջարան-Մեղրի լեռնանցքի ճանապարհահատվածի նորոգման պայմանագիրը կնքել ենք միայն օգոստոսի 28-ին, կազմակերպչական մյուս խնդիրների պատճառով ձգվեց մինչև սեպտեմբերի վերջը: Բայց մենք նախապատրաստվել էինք. եթե նախապես պատրաստ չլինեինք, ապա նման ծավալուն ծրագիր չէինք կարող իրականացնել: Վերջին 10-15 տարում նման մեծածավալ ծրագիր չենք ունեցել: Ճանապարհը երկու բաղադրիչ ունեցավ՝ 4,3 կմ միջին նորոգում, ութ կիլոմետր՝ հիմնանորոգում: Ասեմ նաև՝ 600 մետր երկարությամբ ճանապարհահատվածի վերանորոգումը չկարողացանք ավարտին հասցնել:

Ընդհանուր առմամբ՝ տարին բարեհաջող էր, բարձրացավ ընկերության աշխատողների աշխատավարձը, հավաքակայանը համալրվեց նոր ու ժամանակակից տեխնիկայով: Գիտակցելով, որ ընկերության ներկայիս ասֆալտգործարանը հետագայում մրցունակ չի լինելու, արդեն պայմանավորվածություն ունենք 120 տոննա/ժամ արտադրողականությամբ գործարան ձեռք բերելու համար:

Ունենք համերաշխ կոլեկտիվ, որի միջուկն անփոփոխ է, կարծում եմ՝ նրանց համար առաջնայինը սերն է հայրենի եզերքի նկատմամբ, իրենց փոքր հայրենիք Մեղրիի հանդեպ պատասխանատվությունը: Միշտ օրինակ ենք բերում՝ մեր երեխան, ասենք, պիտի Կապանի հիվանդանոց տեղափոխվի, ինչպե՞ս եք ցանկանում ճանապարհը լինի՝ բա՞ց, դժվարանցանելի՞, թե՞ փակ: Այդ մտածելակերպով էլ առաջնորդվում ենք…

Նոր կադրերով համալրումն է դժվար: Աշխղեկի պահանջ ունենք, տեղում այդ կադրը չկա, դրսից էլ չեն գալիս՝ պատճառաբանելով Մեղրիի հեռավոր լինելը: Հանրապետությունում շինարարությունը զարգացում է ապրում: Մայրաքաղաքում, ասենք, աշխատանք են գտնում, էլ ինչո՞ւ պիտի գան այստեղ: Բայց գան-չգան՝ Մեղրիի ճանշինը շարունակելու է արարումի իր երթը, աշխատանքները կատարելու է, ինչպես միշտ, և պատասխանատու է լինելու իր ամեն մի արածի համար:

– Առաջիկա ծրագրերից խոսենք. ի՞նչ է սպասվում տեսանելի ապագայում Մեղրեցի ճանապարհաշինարարներին:

– Խմելու ջրի մաքրման կայանի շինարարությունը կավարտենք 2023-ին, Քաջարան-Դիբագի լեռնանցք ճանապարհահատվածի 600 մետր տարածությունը կվերանորոգենք, մետաղական արգելապատնեշներ կտեղադրենք, Ագարակում ենթակայան ենք վերակառուցում, Մեղրու մանկապարտեզի տարածքն ենք բարեկարգում (ասֆալտապատում), դե իսկ ճանապարհների ամառային և ձմեռային շահագործումը մեր հիմնական գործառույթներից է: Նախագծման աշխատանքներն ավարտվում են Շվանիձոր-Նռնաձոր ճանապարհահատվածի համար, որի հիմնանորոգումն իմ վաղեմի երազանքն է:

Ինչևէ, ժամանակն իր պտույտներով մեզ մոտեցնում է ամենասիրված և ընտանեկան տոնին՝ Ամանորին: Եվ, օգտվելով առիթից, շնորհավորում եմ Մեղրու ճանապարհաշինարարների Նոր տարին, մաղթում խաղաղություն, երջանկություն, նրանց օջախներին՝ ընտանեկան անդորր ու ջերմություն: Աստված բոլորիս պահապան:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ և ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ
27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.



Կապանցի զորակոչիկները կհամալրեն հայրենիքի պաշտպանների շարքերը

Մարզկենտրոնում հունվարի 10-ին մեկնարկեց հայոց ազգային բանակի շարքերի ձմեռային թարմացման գործընթացը:

Առավոտվանից մարդաշատ էր Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու բակը: Հայրենիքի ապագա պաշտպաններին բանակ ճանապարհելու

էին եկել հարազատն ու դրկիցը, ուսանողական ընկերը, պարզապես ճանաչողները:

Ձմեռային զորակոչին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավար, գնդապետ Վահե Աղալարյանը, ստորաբաժանման զինակոչի բաժանմունքի պետ Սմբատ Դադոյանը, զինվորականներ, մերօրյա պատերազմի մասնակիցներ, զինակոչիկների հարազատներն ու մտերիմները:

Այս անգամ ևս օրվա խորհրդին պատշաճող միջոցառումը սկսվեց Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցուց:

Հայրենիքին արժանապատվորեն ծառայելու մաղթանքով զինակոչիկներին դիմեց Կապանի տարածաշրջանի հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը. *«Վստահ ենք, որ դուք տղամարդավարի եք ծառայելու հայրենիքին: Մեր հույսը դուք եք, ձեզանից առաջ ձեր պապերն ու հայրերն են կանգնել այդ սահմանին, փոխանցել մեզ հայրենիք, որ շատ թանկ է, կորցնելը՝ շատ հեշտ, իսկ ունենալը՝ շատ դժվար: Իմացեք, որ այդ հայրենիքի հենայունները դուք եք, որովհետև դուք եք լինելու սահմանին: Ձեզ ուժ ու կորով եմ մաղթում, իրար նկատմամբ սիրով ու հարգանքով լինեք: Հորամասերում նաև անցանկալի երևույթներ են արձանագրվում, իրար նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեպքեր: Ձեր ամեն մի սխալ արարքը, քայլը, խոսքը թշնամուն ուրախացնում են, ուրեմն եղեք հանդուրժող ու կարգապահ: Մենք միասնորեն կարող ենք եղբայրաբար ու սիրով կերտել հայրենիք և ծառա լինել մեկ Աստծո և մեկ հայրենիքի»:*

Եկեղեցու կամարների ներքո հնչեց Տերունական աղոթքը:

«Անվտանգ ծառայեք»,- մաղթում էր տեր Խաչատուրը յուրաքանչյուրին, իսկ նորակոչիկները մոտենում և համբուրում էին խաչը:

Վերջին մաղթանքներն ու ողջագուրանքները... Մի տեղ հավաքվածները շամպայն են բացում, ցանկանում, որ իրենց ուսանողական ընկերոջ ծառայությունն անփորձանք անցնի:

Հորակոչիկներով լեցուն ավտոբուսներն ուղղություն են վերցնում դեպի կենտրոնական հավաքակայան:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Կյանքից հեռացել է Ալիկ Վեզիրյանը

2023 թվականի հունվարի 4-ին մահվան բոթը սփռվեց ողջ Կապանում. կյանքից հեռացել է Ալիկ Արշամի Վեզիրյանը:

Ծնվել է 1952 թ. մայիսի 3-ին Կապան քաղաքում, մանկավարժների ընտանիքում: Հայրը հանրաճանաչ անձնավորություն էր, ՀՀ վաստակավոր մանկավարժ, Կապանի սպորտային տարեգրության մեջ մնայուն հետք թողած Արշամ Վեզիրյանը (ում բոլորը ճանաչում էին որպես Ամի), մայրը մանկապարտեզում դաստիարակ էր, երկարամյա վաստակաշատ մանկավարժ:

1959-67 թթ. սովորել է Կապանի թիվ 2 միջնակարգ դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Կապանի լեռնամետալուրգիական տեխնիկումում, որից հետո ծառայել խորհրդային բանակում: Ծառայությունն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է Կապանի մատակարարման գրասենյակում, այսպես կոչված բազայում՝ բանվոր, այնուհետև՝ պահեստապետ և մինչև 1995 թվականն աշխատել նշված հիմնարկում:

Հետագայում հիմնել է «Նավասարդ» ՍՊԸ-ն ու շարունակել գործը մինչև կյանքի վերջ: Հազվագյուտ դեպք է, երբ մարդ սկսում է աշխատանքային գործունեությունը ու մինչ կյանքի վերջ աշխատում նույն հիմնարկում: Այդ հազվագյուտներից էր Ալիկ Վեզիրյանը:

Նրա կենսագրականը պարզ և շիտակ է, սակայն բովանդակալից ու հստակ: Աշխատանքային գործունեության ընթացքում իրեն դրսևորել է հմուտ ու բանիմաց աշխատող, բանվորի նկատմամբ բարեհամբույր և հոգատար ղեկավար:

Հայրենասեր անձնավորություն էր: 1988 թվական, Խորհրդային Միության փլուզում, ազգամիջյան կոնֆլիկտներ, 1992 թվական՝ պատերազմ... Նա չէր կարող անտարբեր մնալ այդ ժամանակահատվածում իր քաղաքի նկատմամբ թուրք բարբարոսների ոտնձգությունների հանդեպ: Կապանում ստեղծվեց մի հանձնախումբ, որը զբաղվեց հայրենիքի պաշտպանության համար զենք-զինամթերք ձեռք բերելու գործով: Ալիկ Վեզիրյանն այդ հանձնախմբի կարևոր դերակատարներից էր:

Կապան քաղաքում շատ գործեր է արել թե պատերազմական տարիներին, թե հետագայում: Որպես մարդկային կերպար՝ դրական անձնավորություն էր, մեծահոգի, բոլորին հասնող, ձեռք մեկնող, աջակցող, որպես կապանցի՝ անհատականություն էր: Այո, այդպիսինն էր Ալիկը՝ բոլորի կողմից սիրված ու հարգված:

Ալիկ Վեզիրյանը 1975 թ. ամուսնացել է Նելլի Նավասարդյանի հետ և ստեղծել համերաշխ ու ավանդապահ ընտանիք, ունեն երկու զավակ: Պատվով անցավ իրեն բաժին հասած բոլոր դժվարությունների միջով՝ վայելելով շրջապատի սերն ու հարգանքը:

Երկնային կյանքում Աստված հոգիդ լուսավորի, Ալիկ Վեզիրյան: //

Սյունյաց գահերեց իշխան և զորավար Դավիթ Բեկի ու Սպարապետ Մխիթարի անունները շնորհվեցին Գորիսի վերաշինված փողոցներին

Բնության մեջ չկա և չի կարող լինել մի ուժ, որ կարողանա Սյունյաց աշխարհում իմաստազրկել աճող սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության անհրաժեշտությունը, պատանիների ու աղջիկների ներաշխարհից դուրս մղել հայրենատիրության վեհ զգացումը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության և հայրենատեր լինելու գաղափարի առանցքային բաղադրիչներից են մեր հերոս նախնիների հիշատակի հանդեպ պատկառանքը, նրանց կերպարի ու հիշատակի ոգեկոչումը: Հենց այդ տրամաբանությամբ էր Գորիսի ներհամայնքային վերաշինված երկու փողոցը Սյունյաց գահերեց իշխան ու զորավար Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի անուններով կոչելու արարողությունը:

Սրբազան այդ անուններով փողոցների անվանակոչումը մի քանի խորհուրդ ուներ:

Նախ՝ ավարտվող 2022 թվականը Դավիթ Բեկի գլխավորած ազգային-ազատագրական շարժման 300-ամյակի տարին էր: Դա Սյունիքի պատմության ամենահերոսական էջերից է, որը դարեր շարունակ ոգեշնչել է երկրամասի բնակիչներին, նաև այսօր է ոգեշնչում, ինչի վկայություններից մեկն էլ նշված անվանակոչություններն են: Ասել է թե՝ պատմական այդ իրադարձության հոբելյանն այդպես կամեցան նշանավորել գորիսեցիները:

Մյուս կողմից՝ Սյունիքն ու Արցախը ճակատագրական օրեր են ապրում, և վճռորոշ այս պահին նման անվանակոչությունը նաև նրանց պատգամներին հավատարմություն է նշանակում: Իսկ Դավիթ Բեկի ու Մխիթար զորավարի պատգամը մեկն էր՝ տեր կանգնել մեր հող ու ջրին, արժանապատվորեն դիմակայել թուրքական նկրտումներին, Սյունիքի բռնազավթված տարածքներն ազատագրել թշնամուց:

Առաջինը տեղի ունեցավ Գորիս-Վերիշեն-Ակներ ներհամայնքային 1.4 կիլոմետրանոց ճանապարհի բացումը, որն իրականացվել էր ՀՀ կառավարության ու Գորիսի համայնքային իշխանության համաֆինանսավորմամբ:

«Արհովշին» ՍՊ ընկերությունը մոտ 200 մլն դրամով կարողացել է հրաշալի ճանապարհ կառուցել՝ գետանցում-կամրջով, մոտ 900 գծամետր երկարությամբ հենապատով, ինը մետր երթևեկելի մասով, երկկողմանի մայթերով: Կարգավորվել է փողոցին հարակից տների ջրամատակարարման ցանցը՝ և՛ խմելու ջրի, և՛ ոռոգման ջրի: Նորաշեն փողոցն ապահովվել է նաև արտաքին լուսավորությամբ: Ահա այդ փողոցն էլ կոչվեց Դավիթ Բեկի անունով:

Այնուհետև տեղի է ունեցել Մխիթար Սպարապետի անունը կրող փողոցի բացումը: Գորիսի հայտնի դիտակետի մերձակայքով ձգվող՝ մոտ 500 մ երկարությամբ փողոցը յուրօրինակ է իր նշանակությամբ: Այն երթևեկելի մաս չունի, ավելի շուտ ճեմուղի է՝ վեց մետր լայնությամբ, արտաքին լուսավորվածությամբ, նստարաններով ու կանաչ գոտիներով:

Գորիսին քաջածանոթ յուրաքանչյուր ոք տեղյակ է, որ այդ վայրը ոչ միայն գորիսեցիների, այլև քաղաք այցելած ամեն մի զբոսաշրջիկի համար հաճելի վայր է: Ոչ մի տեղից այնպես չեն երևում Գորիս գյուղի երկնահաս քերծերն ու քարանձավները, հին բնակավայրի նշխարներն ու սրբավայրերը, որքան այդ փողոց-ճեմուղուց:

Ծրագիրն իրականացվել է Գորիսի համայնքային միջոցներով (մոտ 120 մլն դրամ) և «Մաստարա» Ա/Կ-ի աշխատանքով:

Դեկտեմբերի 25-ին Գորիս համայնքում մեկ այլ իրադարձություն էլ տեղի ունեցավ: Դեռևս 1980-ականներին կառուցված Վերիշենի մանկապարտեզն էր հիմնանորոգումից հետո դռները բացում գյուղի մոտ 120 երեխայի համար: «Փարոս» հիմնադրամը 42 մլն դրամով մանկապարտեզի տանիքն է փոխել, խոհանոցային մասը նորոգել, չորս նոր խմբասենյակ ավելացրել, ջեռուցման համակարգ կառուցել:

Օրն ամփոփվեց քաղաքային տոնածառի լույսերը վառելով...

Գրիգոր Տաթևացու անունը կրող հրապարակում վեր հառնած ավանդական տոնածառի շուրջ հավաքվել էին ոչ միայն գորիսեցիներ:

Տոնական միջոցառմանը մասնակցում էին Լաչինի միջանցքի ապօրինի շրջափակման հետևանքով Գորիսում հանգրվանած արցախցիները: Նրանց տրամադրությունը, որքան տեսանք, ստույգ արտացոլանքն էր այն հավատամքի, որ ոչ մի շրջափակում, ոչ մի ահաբեկչություն ու դաժանություն՝ դրսևորվող թուրք-ազերիների կողմից, չեն կարող կոտրել արցախցիների կամքն ու վճռականությունը՝ մինչև վերջ պայքարելու հայոց Արցախի լինելության համար:

Տոնածառի լույսերը վառելու պատիվն ընձեռվեց Ձմեռ պապին և արցախցի երկու փոքրիկի: Այնուհետև տեղի ունեցավ համերգ, ելույթներ ունեցան «Արցախի ձայներ» խմբի մենակատար Անի Պետրոսյանը, Արցախի «Սայաթ- Նովա» երաժշտական քոլեջի դասախոս Լիլիթ Ավանեսյանը՝ «Շուշի» երգի կատարմամբ, Արցախի «Ասպարեզ» պարային ստուդիայի սաները (գեղարվեստական ղեկավար՝ Լարի Ավանեսյան), Գորիսի «Վահե Մելքումյան» պարային ստուդիայի սաները, ինչպես և Շուշան Պետրոսյանը, Արսեն Գրիգորյանը, Գևորգ Մարտիրոսյանը, Գայա Արզումանյանը:

26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2022Թ.

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կոլեկտիվը խորապես վշտացած է մասնաճյուղի աշխատակից Արամ Գրիգորյանի մոր՝ Ամալյա Պետրոսյանի մահվան կապակցությամբ և ցավակցում է հանգուցյալի հարազատներին և մերձավորներին:

ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ «Սյունյաց երկիր» թերթի խմբագրակազմը խորապես վշտացած է թերթի աշխատակից Մարի Նավասարդյանի հոր՝ Սեյրան Նավասարդյանի մահվան կապակցությամբ և ցավակցում է հանգուցյալի հարազատներին և մերձավորներին:

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴՐԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Ⓡ նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1045, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.01.2023թ.: